

ՄԱՂԻԿ Ի ԿԵ ՏՐԱՄԱՐԱԿՈՒԻ ԴԱՐՄԱԹ ՕՐԵՐԸ — Հա-  
տը 40 փարս :

Բաժանորդագրին կլինի Պոլսոյ Համար տարե-  
կան 45 դրշ : վեցամեայ 23 դրշ : եռամեայ 12 դրշ :  
Գաւառաց Համար տարեկան 50 դրշ : վեցամեայ 26  
դրշ : եռամեայ 14 դրշ :

Ռուսոյ Համար տարեկան հինգ ռուբլի : Ռուսիշ եր-  
կիրներու Համար 12 ֆրանք :

Գաւառներէն գրողներու զմեջ կ'ընդունուի :  
Միայն երեք թիւ ապուսիկ կը զրկուի : պնուհետեւ  
բաժանորդագրին չը վճարողը կը գաղթի թերթ ընդու-  
նելէ :

Մանուցման տողը 2 դրշ :

40 փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

# ՄԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Բ

ՄԱՂԻԿ Ի ԿԵՐԱՔԵՐԵԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԱԿՏԱՔ Ե  
ԳԻՔԵԼ :

Առ ՏՅՈՐԷՑ-Հրատարակիչ ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ  
Պոլսոյ, Լակի-Չապիթի, Պերպլերեան Տպարան

درعليه اسكي ضبطيه زقاغنده برريان مطبعه سنده  
بالاقاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian  
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻԻ 17 Շ Ա Բ Ա Թ 5 ՅՈՒՆՎԱՐ 1894

1890 ԴԵՍԵՄԲ. 31

ՏԱՐԻ Մ'ԱԼ ԱՆՑԱԻ

Խորհրդեք քիչ մը :  
Ապրիլը ընտանի է . կեանքը օգտակար  
ընելը՝ բանական :

Մանկութիւնը, անցեալին գրեթէ ան-  
տեղեակ եւ ապագային անհոգ, ներկայն մի-  
այն ունի զոր վայելէ խնդամիտ. իրեն թո-  
ղունք կ'ԱՂԱՆԳԻՆ որ բարով եկաւ գեղեցիկ  
կաղանղէքներով :

Զարգացեալ հասակը այս վայրկեանիս բոլոր-  
ովին տարբեր դիրքի մէջ պէտք է գտնուի .  
երէջք ունին պարտականութիւն մը զոր չէ  
կարելի լնուլ զեղուն բաժակներ քամելով ի  
կենդանութիւն միմեանց, քանի որ մահը կը  
յառաջանայ :

Մտախոհ անձի մը համար կաղանղն է  
մի նոր տաղանդ, զոր բնութեան Տէրը յա-  
ւելու տայ իրեն այն պայմանաւ որ ջանադիր  
ըլլայ, ըստ իւր կարի, լաւ շահաւորելու  
զայն, եւ անցելոյն թերութիւնները ուղղե-  
լով՝ բարեօքէ իւր եռապատիկ կեանքը :

Ա. Բարոյական կեանք որ զարգանայ բա-  
րին խորհելով եւ բարին գործելով. յայտ է  
Առաքինութիւն :

Բ. Բանական կեանք որ ճոխանայ օգտա-  
ւէտ ծանօթութեամբ, զիտութեամբ եւ  
ճարտարութեամբ. յայտ է Յառաջադիմու-  
թիւն :

Գ. Նիւթական կեանք որ բարգաւաճի շա-  
հելով իւր պիտոյքը պարկեշտարար . քրտամբ  
երեսաց վաստակ, խղճամիտ աշխատութեան  
փոխարինութիւն որով կ'աղբի համեստ մար-  
դը եւ կ'ապրեցնէ իրենները, ըլլալով միանգա-  
մայն օգտակար անգամ մարդկային ընկերու-  
թեան . յայտ է բարեօք Տնտեսութիւն կամ  
ստանին խնայողութիւն : Այս նպատակին  
պէտք է կանխաւ ուղղուած ըլլայ կրթու-  
թիւնը, նախ ի տան, ապա ի վարժոցի, հա-  
սակի չափովը մատակարարելով ըստ օրինի .  
մարմնոյ սնունդին հետ սնունդ հոգւոյ եւ մը-  
տաց, եւ յայտ է ճնողաց եւ ուսուցչաց հա-  
մերաշխ գործակցութեան արդիւնքը, այն իսկ  
է բարեօք դաստիարակութիւն :

Արդ, քանի որ մէկ կողմանէ անտարա-  
կուսելի է թէ « ոչ հացով միայն » (իմա՛, ոչ  
դրամով միայն) պիտի ապրի մարդ, այլ եւ  
բանիւ, եւ միւս կողմանէ այնչափ ստոյգ է  
օրհասը, որչափ սե ժամը անստոյգ, պատեհ  
է որ մարդ նորածին տարւոյս մէջ իր ընթաց-  
քը բարեօքելու համար արդ իսկ վախճան-  
եալ տարւոյն վրայ իւր հաշիւը ստուգէ՝ իրրեւ  
իմաստուն վաճառական շահն ու կորուստը  
կշռելով :

Արդ, մեր կենդանութիւնը համարելով դը-  
րամագլուխ, մէկ տարուս կը բուստը որչա՛փ

չահ տուաւ մեզ՝ եռապատիկ պարտականու-  
թեանցս ի միասին կատարմամբ : Երանի ա-  
նոր օրուն միտքն ու խիղճը գոհ մնան իւր  
հաշուեկալոյն արտադրութենէն . այսպիսի  
անձ մը, իրրեւ մի գեղեցիկ բացառութիւն,  
պատուով կարող է կրել մարդ անունը իւր վը-  
րայ . ի միջի խուռն բազմութեան իւր նման-  
եաց՝ որոց կենցաղը, եթէ յոյժ գովելի ալ  
ըլլայ յաչս այլոց, խոտելի է յաչս իւրեանց՝  
ներքին համոզմամբ :

Զէ ուրեմն անստուգե՛ք մեր ընտանիք երկ-  
րագունտը նկատել իրրեւ մի ընդար-  
ձակ անդատան շրջում մէն մի անհատ ունի  
իւր փոքրիկ շրտը, իւր անուն, որուն ինքն  
է մշակ : Հոն մոլի խոտը ինքնարոյս է եւ յա-  
րաճուն, մինչ ընթի բուսակը աշխատու-  
թեամբ միայն ուսմանն, եւ այս աշխատու-  
թիւն կրկնակի է . նախ պէտք է շարութենէն  
արմատին խել եւ միշտ խել, եւ ապա  
բարին սերմանել եւ շարունակ դարմանել,  
մի՛ գուցէ հեղձնու եւ անուն մնայ ամուլ :

Այսպէս, կեանքն է մի տեսական մրցու-  
թիւն յորում մարդ իւր ակարութեան զօրա-  
ւիք կրնայ ունենալ, մտաց եւ խղճի ուղղու-  
թեան ներքեւ, հաստատ կամքն ու յարատեւ  
ջանքը որով դժուարութիւնք կը հարթուին  
եւ յաջողութեան յոյսը կ'առաւելու ի քաջալե-  
րութիւն, շնորհիւ Գերագոյն կակին որ ժա-  
մանակի Տաղանդը աւանդ տուած է մեզ եւ  
պիտի պահանջէ սոկոտով :

Հետեւարար, ով որ իւր պարտականու-  
թեանց կը թերանայ գիտակցարար, կենացը  
նպատակին կը թերանայ . եւ ընկերական ինչ  
գասակարգէ ալ որ ըլլայ՝ ափ մի հոյի չափ  
ալ արժէք չունի յորում պիտի անհետանայ :

Արդ, մարդ կակը որ ճշմարտութիւնը  
փնտռելու եւ յարգելու համար ստեղծուած է,  
պարտի նախ յանձին իւրում խնդրել զայն,  
չմոռնալով երրեք թէ այսօր է, եւ գուցէ վա-  
ղը չի պիտի ըլլայ այլ եւս, եւ համոզուելով  
թէ որչափ կարճատեւ ալ լինի կեանքը՝ միշտ  
բաւական երկայն է բարի ապրելու համար :  
Յ. Ո .

## Թ Ո Ւ Ց Ի Կ Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր

ԽԵՆՊԻ ԽՐԱՏՆ Ի՞ՆՉ ԸՆԷ  
ՍԵՒԸ ՍԱՊՈՆՆ Ի՞ՆՉ ԸՆԷ

« Յիմարներն ընտրեց որ իմաստունները  
ամէցնէ » կ'ըսէ չը գիտեմ ո՞ր մտտեանգիրը .  
եւ անա՛ յիմար բողբ փախուկ, խենք կը հաս-  
կընայ իրերագովական մարմինը ու չկրնալով  
մարտել մեր արդարացի դիտողութիւններն ու  
ճշմարիտ խրատներն ի մասին իրենց հոչա-  
կած սնտոի անձնագովութեանց, Միրիճը  
կ'ընտրէ զմեզ ամէցնելու համար, չենք զար-  
մանար հոնց այսպիսի վատտարան մ'ու-

նենալուն, որովհետեւ « կոյրերու քաղաքին  
մէջ միականիներն իշխան կը համարուին », եւ  
լաւ գիտենք որ « յիմարները կը նետուին  
հոն՝ ուր հրեշտակները նայելու կը դողան » :  
Մենք թէ եւ Պ. Քալանթարեանցին շափ բարձր  
չենք, եւ կը վախճանք այդ բարձրերէն պա-  
տահելիք յանկարծակի անկումէ մը, սակայն  
վաղուց վերահասու լինելով այն ճշմարտու-  
թեան թէ « խենդի՛ հետ դատարան գնացո-  
ղը գաւթի դռնէն կը վռնուի », չենք ստոր-  
նանար քուրցը մտնել Միրիճներու հետ, որ-  
քան ալ հրապուելի լինին եթէ ոչ իրենք՝ գէթ  
իրենց խոստումները, որքան ալ առատ լինին  
իրենց հրաւերները՝ ամառը ի Գընալը կղզի  
երթալու եւ ամէն կերպ զուարճութիւններ  
վայելելու, որպէս զի յաջորդ աւուր թեր-  
թին մէջ գէթ է ֆէնտի տիտղոս մը տրուի  
Գնալը բաց օդին մէջ արտադրուած երիցս  
սեզանաւորացեալ Միրիճին :

Սակայն քանի որ « խենթ մը խրատելը որք  
մը հազուեցնելէ աւելի վարձք է », կը հար-  
ցնենք Միրիճին թէ, իբրք այդչափ կը հիա-  
նայ պանդխտին կեանքէն գրուածներուն վը-  
րայ . եթէ այո՛, երկրորդ հարցում մ'ալ կ'ուղ-  
ղենք թէ ի՞նչ բանի արդիւնք են իրեն ման-  
կութենէ ի վեր կերածը, խմածը, հագածը,  
կապածը . ոչ ապաքէն այն խեղճ ու թըշ-  
ուառ պանդուխտ բեռնակիրներու տաժանե-  
լի աշխատութեամբ ամբան տօթին եւ ձմրան  
ձիւնին շնչին վարձքով մը կրած բեռներուն  
արդիւնքը, որոց վաստակին կէսէն աւելին  
խեղճերուն ձեռքէն կը յափշտակեն իրր օտա-  
պաւի . կ', ինչպէս հաշտեցնենք հիմակ այս  
երկու հակասութիւններն իրարու հետ . ամանք  
Օսապաւիքի պանդխտին շահածը՝ խաբելով,  
ո՛ր է պատրուակաւ անոնց ձեռքէն կորզե-  
լով, տարիներով ձրի աշխատցնելով եւ երբ դը-  
րամ կ'ուղէ, վռնտելով, եւ յետոյ անոնց ձակափ  
քրտանց արդիւնքովը յոխորտալով պիտի  
զգածուին պանդուխտին կեանքէն գրուած-  
ներէ . ասոր կ'ըսեն « գայլին հետ ուտել  
ու յետոյ հովուին հետ լալ » : Գէթ այս պա-  
րագայները խորհելու էր Գընալը երկազափը  
եւ ապա ասպարէզ նետուիլ . սակայն ինք մի-  
թէ պատասխանատու է խորհելու կարողու-  
թենէ զրկուած ըլլալուն . երկրպագանեմ ան-  
հասանելի կարողութեանը . զոմանս յիմար  
կ'ստեղծէ, զոմանս խելը, զոմանս գեղեցիկ,  
զոմանս տգեղ եւ ոչ ոք իրաւունք ունի բողբ-  
քելու թէ ինչո՞ւ զիս այսպէս ստեղծեցիր .  
Միրիճի ստեղծագործութեան մէջ ալ ան-  
շուշտ հրաշք մ'ըլլալու է եւ այդ կը կարծենք  
որ կարող եղանք բացատրել :

Իսկ գալով իրերագովական մարմնոյն, ի՞նչ  
ալ որ ըսէ, մի հաւատաք . մեր խրատները  
իւր վրայ լաւ ազդեցութիւն ըրած են եւ ա-  
մըշտալուն է որ Միրիճներն ու բիւրիճները հը-  
րաւիրած է մեզ պատասխանելու, եւ եթէ՛  
ինչպէս որ ինք կը խոստովանի՝ այդ բազմա-

Թիւ նամակագիրներէ մինակ Միրիճինը յարմար դատեր է պատասխանելու, ալ Գրնալը-ցիները կրնան ինքնին դատել որ եթէ ամենաարժանաւոր գրողը Միրիճն է, հասպ մընացեալները ի՞նչ մարտնչներ են. սխալին ամօթ չէ, այլ խրատ մտիկ չընեն ամօթ է. մենք անձնական ո՞ր է ինչոր չ'ունինք իրերազովական մարմնոյն հետ և եթէ մեր խըրատներէն օգտուելով դադրին իրենք զիրենք գովելէ, այն ատեն մենք այս թերթին մէջ կը գովենք զիրենք իրենց զգաստութեանն ու պարտաճանաչութեանը համար. իսկ եթէ դարձեալ իրենք զիրենք սկսին գովել—թո՛ղ որ չեմ յուսար թէ այդչափ բան չը հասկցող ըլլան— այն ատեն մեզքը իրենց վիզը: Իսկ Միրիճը կ'արձակենք իւր կապանքներէն որ երթայ դարձեալ ըստ առաջնոյն արձակ համարձակ չափէ Գրնալըի արօտավայրերը, իւր գրադիրութեան մասին ալ կրկնելով երևելի բանատեղծին հետ:

Աշխարհ էն որ քանդուեցաւ որ Օտապալին, սառաֆ դառաւ (եղաւ, Տարու մը ինչ որ աշխատեց նրան էլ մի սրհաթ առաւ, Արհաթը ծոցից դուրս քաշեց Վայրկեանները սրհաթ դառաւ (կարծեց Ողջոյն քեզ Միրիճ ՍԻՄՍԻ)

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Տ. Յովնաննէս Աւագ-Բահանայ Հիւնքեարպէյէնցեան

Տեսած էք արդեօք ալեւիայլ, խոնջ, պարտասեալ և կորաքամակ համակրելի քահանայ մը՝ որ երբեմն վարժապետեան հոգեւոյն ներսէս Արքեպիսկոպոսի Ս. Պատարագ մատուցած պահուն առնթերակաց էր նմա, ինչպէս այսօր Մուրատեանց Տ. Մելքիսեղեկ Արքեպիսկոպոսի պատարագամատուցի միջոցին կ'սպասուորէ ի Ս. Թագաւոր եկեղեցւոյ Գառը-գիւղի:

Եւ երբ Որդւոց Որոտման Տօնի օրը Ն. Ա. մենապատուութիւնն կը փութայ իւր համակրական շնորհաւորութիւն անձամբ յայտնել, այդ խոնջ և վաստակարեկ կղերն՝ որ մտաւոր աշխատութեան ծանր բեռին ներքեւ կըքած, հասակն սկսած է փոքրանալ. կըսէ. «Սրբազան, ոչ ընդ Յովնաննու Աւետարանչին, այլ ընդ Յովնաննու կարճահասակին արժան է շնորհաւորել զիս, զի և ես հասակաւ կարճանալ սկսած եմ, որպէս տեսանէք»:

Վերնագրեալն, որպէս յայտ է, Իւսկիւտարի Ս. Սաչ եկեղեցւոյ հոյակերտ երկսեռ վարժարանի հիմնադիր Սերովբան երջանկալիշատակ Յակոբոս Պատրիարքի քեսորդի՝ Հիւնքեարպէյէնցեան Տ. Յովնաննէս քահանայն է, որ որդի է բուն Հիւնքեարպէյէնցեան Տ. Յովնաննէս Աւագ-քահանայի Պալատու (1), որ յաշխարհականութեանն Սերովբէ անուամբ ի Մեծ-Շուկայն Գալաթիքըրպա-չին խանութպան է եղեր՝ գեղադէմ փառամօրուք, երևելի տաճկագէտ՝ որոյ յօրինած Օսմանեան պատմութեան տաճկագիր պրակներն Կոստան մատուցուած են, և ճարտարաբան ոք լինելով, որ մը Կայսրն բարեփառ Սուլթան Մահմուտ, Գալիպոսըրպա-Պաշիէն անցած պահուն տեսնելով զնա, յոյժ կը հաւանի մօրուքին վայելչութեան, յորմէ Հիւնքեար-Պէյլիսի և սիլիսի տաճկական բառով բանատեղծական մականունը ծագում կ'առնու:

Կարեւոր է յիշատակել թէ այս գերդաստան շուրջ երկու դարեր «Տէր Յովնաննէսներ և «Սերովբէ»ներ շառաւիղած է, ինչպէս գիտենք թէ Հիւնքեարպէյէնցեանի հաւուն(2) եղբայրն ալ Տ. Յովնաննէս եղած է, որ է հայր՝ բարեյիշատակ Պէզճեան Յարութիւն Ամիրայի արդեամբք և ծախիւք ի 1826 յՕրթագիւղ յԱրապեան գործարանի տպագրեալ Պարսկահայ ընդարձակ բառարոց բազմադիւն հեղինակին, յաւէտ ողբացեալ Գէորգայ պատուելոյ Պալատեցւոյ կամ Տ. Յովնաննէսեան Գէորգայ դպրի Պալատեցւոյ (3):

Հիւնքեարպէյէնցեան 1818 Նոյմ. 25 ին ի Պալատ Թախթա-Մինարէ թաղը ծնած է իւր մայրենի տան մէջ, ուր ծնած էր նաև մօրեղբայրն, սրբազան Սերովբեան:

Աշխարհական կարգի անունն էր Թաղէոս, որ ի տես տղայութեան Պալատու թաղային վարժարանը յաճախած ու նախակրթանքն անդ առած է:

Եւ ապա, 1830-1833, աշակերտած է նշա նաւոր հայկաբան Փէշուրմալճեան Գրիգոր պատուելոյն, որ առ կաթողիկոսն էջմիածնայ ուղղեալ նշանաւոր թղթոց մէջ այսպէս կ'ստորագրէ եղեր՝

«Նուստ Գրիգոր մանկավարժ Փէշուրմալճեան, աւակերտ Թէոդորոս սարկաւազի Երզնկացւոյ, միաբանի սրբոյ եւ մեծի Արոտոյգ էջմիածնի»:

Այս թուականին՝ աշակերտակից եղած են պատանի-Թաղէոսին՝ հետեւեալք:

Պատրիարքարանի տաճկերէնի նախկին քարտուղար՝ հանգ. Գէորգ Էֆ. Գրիգորեան, Տիրացու Սաչատուր Մամրէեան, Տիրացու Յովնաննէս Աճէմեան, Սաչատուր Արրահամեան, Աւետիս Սէմլըճեան:

Ի սկզբան դարուն Յունարէնն՝ ծովային, ու Իտալականն՝ քաղաքական լեզու էր, ինչպէս որ այժմ Անգլիականն՝ ծովային ու Ֆրանսականն քաղաքական լեզու կը նկատուի ընդհանրապէս. հետեւաբար պատանին Տիրացու-Թաղէոս ինքնօգնութեամբ հետամուտ եղաւ ուսման Յունականին և Իտալականին, որպէս և զարդիս լաւ գիտէ Ֆրանսերէնն և հին Եբրայեցերէնն, և գրեթէ այլոց լեզուաց նախագիտելիքներն ինքնակրթութեամբ մշակած է:

Հագիւ ուսանողական կեանքը թողած, 1834 ին ի Ֆանար Սորասանճեան Պետրոս աւմիրայի տունն ի վարժապետութիւն կոչուած է՝ ուր դասատուութեան կրկին շրջաններ բոլորած է, նախ տարի մի և կէս, և ապա երեք տարի մնալով անդ:

Յետոյ Պալատու թաղային վարժարանն հայկաբանութեան դասատուութեան հրաւիրուած է և անդ յաջողապէս պաշտօնավարած: Սոյն վարժարանին պարզեւարաշխութեան հանդիսի մը առթիւ արտասանուած խմատալից մի ճառը վերծանելու բաղին ունեցած եմ Մասիս լրագրէն առաջ հրատարակուած հանգուցեալ Տէրոյնցի և Ալաթօն Մկրտչի աշխատակցութեամբ հրատարակեալ ազգային շարաթական լրագրոյն մէջ:

Ի Սասգիւղ Բարունակ տղայի տան մէջ վարժապետութիւն ըրած է երկամեայ միջոցաւ:

1840 ին Համազդեաց ընկերութեան հիմնադիրներէն մին եղած է:

Նոյն տարին Յակոբոս Սրբազանի պատրիարքութեան նոր թուականը լինելով, Նորին Ամենապատուութեան անձնական քարտուղարութեան պաշտօնին, ու միանգամայն կ'էտիկ-

փաշայի թաղին դպրոցի Հայկաբանութեան ուսուցչի պաշտօնին կը կոչուի:

Գրեթէ մի և նոյն ժամանակները Մարգարեան Աստուր Աղայի տունն ևս կը յաճախէ ի դասախօսութիւն Յունարէնի, յամրան՝ Իւսկիւտար, և ի ձմերայնի՝ Կէտիկ-Փաշա:

1841 ին իւր առաջին ուղեւորութիւնը կը կատարէ ի Զմիւռնիա անձնական գործոյ ազգաւ: 1848 ին Իւսկիւտարի Ս. Կարապետի վարժարանը տարի մը Հայկաբանութեան դասատու կը կարգուի:

1849 Յունիս 14, պսակադրութեամբ Տ. Յակոբ քահանայի Ս. Պէշիթաղեան (4), և կնքահայրութեամբ Ալաթօն-Մկրտչի էֆէնտիի, կ'ամուսնանայ ընդ Օրիորդ Փարիզ Գալֆայեան Պալատեցւոյ, յորմէ կը ծնանին՝ առաքելոց թուով երկսեռ զաւակներ, որոց չորսը մեռած, և ութը կենդանի են այժմ, որք են՝

Անդրանիկն՝ Լեւոն Էֆ. (մանագէտ երկրագործ, և վերատեսուչ՝ կայսերական ագարակին ի Զմիւռնիա):

Տօքթ. Կոպեռնիկ Էֆ. (նշանաւոր բժիշկ Ազգ. Հիւանդանոցի):

Պ. Սաչիկ (գեղագործ՝ ի Փարիզ):

Պ. Դաւիթ (գեղագործ՝ ի Փարիզ):

Պ. Սերովբէ (ուսանող գեղագործութեան ի Փարիզ):

Իսկ երեք աղջկանց անուններն՝ հին սովորութեան համեմատ, թագուն մնալ հարկ դատուեցաւ:

Խոսքիւղի Ներսիսեան վարժարանի մէջ ալ Հայկաբանութեան դասատուութիւն կ'ստանձնէ Տիրացու-Թաղէոս՝ քանիցս հրաժարելով ու վերստանձնելով, ո՛ր կ'աշակերտինմա ի մէջ այլոց հոգեւոյն ներսէս վարժապետեան, Փապուճճեան Տ. Գրիգոր Պարտիզակցի, Վսեմ. Տօքթ. Տիրացու փաշա Փէշուրմալճեան, յաւէտ սքսցեալ Տօքթ. Միհրան Արծրունի, անմահանուն Ստեփան Էֆ. Փափաղեան, Աւաքել Ալթուն Տիրարի, Թաղէոսեան Ռեթէոս, Ֆրէնկեան Գրիգորիկ, Թիրեաքեան Կարապետ էֆէնտիք և այլ ծանօթ անձնաւորութիւնք:

Եւ այս միջոցիս, 1852 ին, Տ. Յովնաննէս՝ ժառանգական անուամբ քահանայ կը ձեռնադրուի Յակոբոս Պատրիարքէն, Պալատու Ս. Հրեշտակապետ կեղեցւոյն մէջ՝ ո՛ր իւր արժանայիշատակ և բազմադիւն նախնեաց հետ քահանայական դասու թիւը (5) ց35 կը հասնի եղեր, ինչպէս և այն ատեններ՝ Մայր-եկեղեցւոյ քահանայիցն՝ ց75, և Սամաթիոյ Ս. Գէորգայն՝ ց52 կը լրանայ եղեր յաւուր Տ. Կոմիտասայ աւագերէցութեան:

Նորապսակ Տ. Յովնաննէս քահանայ ի Սասգիւղ շարունակելով այսպէս զիւր պաշտօն համանգամայն Բերայի Նարեկեան վարժարանի Հայկաբանութեան դասախօսութեան կը հրաւիրուի ու կը պաշտօնավարէ:

Յակոբոսի երրորդ պատրիարքութեան օրով կրօնափոխական դէպք մը կը պատահի: Այն է՝ Պալատու Հայ օրիորդ մը Յոյն երիտասարդի մը սիրահարուելով, Յունաց Պատրիարքարանը վերջապէս կ'ապաստանի ու կ'առաջարկէ յունանալ: Երբ Հայոց Պատրիարքարանը զայս կ'իմանայ, բարապան մը կը զրկէ Պալատու Ս. եկեղեցին, հրամայելով որ նոյն շարաթական շրջանի ժամարարն, որ սոյն այս Տ. Յովնաննէսն կը լինի, առնելով Յունաց Պատրիարքարանը դիմէ՝ աղջիկը պահանջելու համար:

Տ. Յովնաննէս՝ առաջնորդութեամբ բարապանին՝ Յունաց Պատրիարքարանը կ'ուղղուի

և Յունաց Պատր. Փոխանորդին կը ներկայա- նայ ու կը մատուցանէ Հայոց Պատրիարքին ողջոյններն ու խնդրանքը:

Անդ փոխանակուած խօսակցութիւնը սաճ- կերէն լեզուաւ կը կատարուի. Յոյն քա- հանայ մը առանց գիտնալու թէ՛ Տ. Յով- հաննէս հայր քաջ յունագէտ է՝ իւրայնոց յունարէն կը հրամայէ թէ՛ ձախակողմեանց եկած լինելով, աղջիկը անտի հեռացնեն իս- կոյն:

Տ. Յովհաննէս անայլայլ դիմօք զայս լե- լով՝ ներկայից գուշակել չտար իր յունա- գիտութիւնը: Յոյն քահանայն բացասական պատասխան տալով կը յայտնէ թէ՛ այդպիսի Հայ օրիորդ մը իրեն դիմում ըրած չէ՛ եր- բէք, և հետևարար Տ. Յովհաննէսին խնդրելին չէ անդ:

Առ այս Տ. Հայրը քմծիծաղով մը պատաս- խանելէ յետոյ թէ՛ Նորին Սրբութիւն չէ՞ր միթէ յունարէն լեզուաւ աղջիկն անմիջապէս հեռայնել հրամայողը, կը զարմացնէ մեծա- պէս զՅոյնս՝ իւր ներկուս յունագիտու- թեան մասին, որով գրեթէ առժամայն խնդ- րուած աղջիկն իրեն կը յանձնուի ի պահպա- նութիւն և յառաջնորդութիւն յիւր հայրենի տունն, ուր յետոյ համազօրոյ մը հետ կ'ա- մուսնացնեն զ'ա:

1858ին Պալատու եկեղեցւոյն Աւագերէց կարգուած է:

Այս թուականին հրատարակեալ Սըվաճեան Յարութիւնի Մեղու գաւեշտախօս և երգի- ծարան պարբերութիւն մէջ բազմաթիւ խմբագրական յօդուածներ ունի, յորս կը փայլին Հիւնքեարպէյէնտեանի բնատուր զուարճախօսութիւնն ու սրարանութիւնը:

1860ին Պալատու արդի երկսեռ վարժարա- նի փառաւոր չէնքը իւր նախաձեռնութեամբ կառուցուիլ կ'սկսի, և յարուցեալ բոլոր յա- րակից դժուարութեանց դէմ մաքառելով ի կատար կ'ածէ զայն, զոր խորէնեան անուամբ կը վերակոչէ. վկայ են Վսեմ. Սերվիչէն, Յրէնկեան Մկրտիչ, Իւթիւճեան Կարապետ և Տէօքմէճի Համարձու՛մ էֆէնտիք:

Նորին Սրբութիւն Սահմանադրութեան հիմնադիրներէն մին լինելով, թէ՛ Պատրիար- քարանի և թէ՛ Բ. Դրան կողմանէ կարգեալ կրկին գործադիր յանձնաժողովոց անդամակ- ցած է, և նոցին ժողովոց պատրաստած Սահ- մանադրական օրինատետրերն իւր իսկ ստորագրութեամբ վաւերացած, միւս անդամոց հետ:

1861ին յերուսաղէմ զրկուած է Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէն:

Այս երկրորդ ճանապարհորդութեան մէջ յԱզգ. քանդակաւ միանգամայն հանդիպելով, Յակոբեան թագուոր փաշայի ընդ ազնուա- պերճ երանուհւոյ՝ դստեր Խօրասանճեան Պետ- րոս Ամիրայի՝ նշանախօսութիւնը կը կատարէ:

1862ին Սոսյ Ամեն. Տ. Տ. Կիրակոս Կաթո- ղիկոս զինք ձեռնադրող հոգևոր ծնողին յա- տուկ մանիշակագոյն վիլլոնն կ'ուղարկէ առ Տ. Յովհաննէս՝ ի գնահատումն Նորին Սըր- բութեան արժանեաց և վաստակոց, զոր ցայ- սօր իսկ կ'զգենու:

1863ին օգոստ. 15 էն սկսեալ այլ և այլ շրջաններու մէջ պարբերաբար Կեդր. Երես- փոխան ընտրուած է:

Նոյնպէս 1863էն սկսեալ Ազգ. Կեդր. Վար- չութեան Կրօն. Ժողովոյ անդամ ընտրուած է, և բաց ի պաշտօնով բացակայ գտնուած ժամանակներէն, պարբերաբար՝ երկուուսայ շրջանի ընտրութեանց միջոցին զրեթէ միշտ անդամ ընտրուած է յիշեալ ժողովոյն:

1864ին ի Փարիզ ուղևորելով, անդ զըտ- նուող Հայ գաղթականութեան հովուական պաշտօն կատարած է մինչ 1876, և այդ շըր- ջանին մէջ Աղաթօն Գրիգոր էֆէնտի անդ վարձանելով՝ մարմինն աստ ի Պօլիս փոխադ- րելու անձամբ աշխատած է մեծապէս:

Ապա Փարիզ դառնալով, նախնի պաշտօնը շարունակած և Փարիզի պաշարման ատեն միայն պարտաւորուած է պաշտօնէն հրաժա- րելով Պօլիս գալ:

Հիւնքեարպէյէնտեան Հայրն՝ այլ ուղևո- րութիւններ կատարած է, ինչպէս երբեմն ի Հռոմ գնացած, որ չորրորդ ուղևորութիւնը կը համարուի, և Ս. Պապին ներկայանալու ընծայագրերն իսկ ընդունած է, թէպէտ չէ ներկայացած:

Հինգերորդ ճանապարհորդութիւնն ի Վե- նետիկ ընելով, ինն օր Ս. Ղազարու վանքին մէջ հիւրընկալուած է, և յԱրբաճօրէն սկսեալ յետնագոյն միարանն խանդաղատագին սիրած ու յարգած են զինք:

1870էն ետքն ալ Խաղաղի Ներսէսեան վարժարանի հայկաբան, միանգամայն և Ծահ- նագար-Նուպարեան վարժարանի (6) Վերատե- սուչ-Հայկաբան կարգուած է:

1878ին երբ Կիպրոս կղզին Անգլիական կա- ռապարութեան վարչութեան ենթարկեցաւ յատուկ դաշնադրութեամբ, Ներսէս Պատրի- արքի կողմանէ Տ. Յովհաննէս Պատր. Փոխա- նորդ ընտրուելով անդ զրկուեցաւ ի հոգևոր հովուութիւն Կիպրոսի Հայ ժողովրդեան, ուր ինն ամիս մնալէ զինի կը հրաժարի, ի վերադարձին Զմիւռնիա հանդիպելով վար կը դըրուի, ու տեղւոյն Ս. Ստեփաննոս եկեղեց- յոյ պաշտօնեայ, և համանգամայն Իփէքճեան Համարձու՛մ էֆ. ի յաջորդելով տեղւոյն Ս. Մեսրոպեան ու Հռիփսիմեանց վարժարանաց Տեսուչ, նաև Ս. Լուսաւորչի հիւանդանոցին մատրան մատակարար կը լինի, ու տարի մի և կէս անդ կը պաշտօնավարէ. այս միջոցին Այտըն եւս հրաւիրուելով առ ի չգոյն տեղ- յոյն քահանայի, 40 օր ևս անդ կը քահանա- յագործէ:

Յետ այսորիկ, 1881 ին ի մայրաքաղաքս դառնալով Ներսէս Պատրիարքէն աւագու- թեան տիրոջն ընկալաւ, ու Ղալաթայի Ս. Լուսաւորչի եկեղեցւոյն Աւագերէցն ե- ղաւ, յորում Ազգ. Կեդր. Մատենադարանի զարգացման ոչ նուազ նպաստամտոց եղաւ, դասակարգելով անդ պարունակուած հին և նոր գրեանց համապատկեր ցուցակը:

Թողումք այլ և այլ ժողովոց և յանձնաժո- ղովոց անդամակցութիւններն ու պատուիրա- կութեամբ կատարած զոնազան պաշտօնները յիշատակել, ինչպէս և երկու ամօք յառաջ Գատը-գիւղի Արամեան երկսեռ վարժարանի մէջ կատարած կրօնուսոց դասատուի պաշ- տօնն ու Ս. Թագաւոր եկեղեցւոյ մէջ կա- տարած քահանայագործութիւնը, նոյնպէս և Նոր-Կտակարանի աշխարհիկ թարգմանու- թեան համար յոգնաջան վաստակն, և իբր գրաբար լեզուի քաջահմուտ՝ այլ և այլ առ- թիւ գրած ու հրատարակած զարմանագիծ նամականին և այլ մանրաման գրական գոր- ծերն ու ձուերն, ևն, և զայս միայն նշանա- կելք որ 72 գարուններ ձմերուղ անպարապ և գործօն անձնաւորութիւն մը յինքեան պա- հած է այսօր՝ միայն Իզմիրեանց Աղա Յովսե- փայ կոտակի գործադրութեան մնայուն յանձ- նաժողովոյ անդամակցութիւնն, և իբրեւ յայտնի վկայեալ ձեռնահաս օք՝ Աստուածա- շունչ Ս. Գրոց գրաբար վերջնական կատա-

րեալ թարգմանութեան համար այլոց ձեռն- հասից հետ ըրած բաղդատական հետազօտու- թեանց և քննութեանց ջանասիրական պաշ- տօնն, ու հակառակ Տէրվիչեան Հ. Սերով- բէի հանապազօրեայ Մասխներու մէջ հրա- տարակած անխնայ բանադատութեանց, բը- նաւին անյուսահատ՝ իւր յօրինած Հայ Սոու- գաբանակալն Բառարանի հրատարակութեան փութկոտութիւնն, որ յետ քանի մը նախա- փորձերու, մինչ 20 թերթ տպուած է այժմ, և կը շարունակուի ի լոյս գալ ամբողջ գործը, ոյր յաջողութեան կամ անյաջողութեան քըն- նադատական վճիռը՝ ապագայն պիտի ար- ձակէ Նորա բեղուն և խոնկ կեանքին վերջա- բանին հետ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

(1) Այս Հիւնքեարպէյէնտեան Տ. Յովհաննէս քահանայն՝ Տիրացու Թադէոսն զատ, ու- նեցած է նաև ուրիշ երկու գաւակներ՝ Դա- լիթ և Գեղէնն անուններով:

Առաջնոյն չորս գաւակներն են՝ 1. հոն- գուցեալ Սողոմոն էֆ. առաջնակարգ ճարտար գեղագիր, որ և 32 տարիներ՝ Արտաքին գոր- ծոց պաշտօնատան թարգմանչութեան գրա- սենեկին անդամներէն էր. 2. Գամիկ էֆէն- տին, որ 1870ին ի Պատրիարքարան 5 տարի, և ապա՝ Ազգ. Հիւանդանոցի գրասենեկին ընդհանուր գործակատարութեան բազմաըզ- բաղ պաշտօնը կը վարէ. 3. Տիգրան էֆէնտի որ 1886էն յՕտէսա՝ Օսմ. փոխ հիւպատոս է. և 4. Պ. Յովհաննէս, որ մեկուսացեալ կեանք կը վարէ:

Վերոյիշեալ քահանայի երկրորդ որդին Գէղէնն ունի այսօր երեք գաւակներ, որոց առաջինն՝ Բարթիկ էֆ. որ 1863 էն սկսեալ Մայր-եկեղեցւոյ Թաղ. խորհրդոյ քարտու- ղարութիւնը ստանձնած է, միանգամայն Ս. Երուսաղիմայ և Ս. Փրկչեան Հիւանդանոցի սեպակական վարքներուն ճապիութիւնը (հաւաքչութիւն):

Երկրորդն՝ Եղուարդ էֆ. որ Օսմանեան կեդրոնական նամակատան մէջ հեռագրական սենեկին պետն է:

Երրորդն՝ Մարտիկ էֆ. որ Սիրքէճի նա- մակատան հեռագրատան մասնաճիւղին պետն է:

(2) Նորա հաւն եղած է Բաբերդցի Զրկիր- Դաւիթ, որ 1794 Սեպտ. 10 ին կնքած է մահկանացուն, ինչպէս նաև սորա կողակից՝ Տիրուհի Տիկինը՝ 1803 Ապրիլ 14 ին:

(3) Պալատեցի Գէորդ պատուելի սքանչե- լագիր հայկաբան լինելով հանդերձ, քաջ գի- տէր Տաճկերէն, Պարսկերէն և Արաբերէն, Եր- րայերէն, Հելլենարէն, Լատիներէն լեզուներ- ըն, ու Պարսկահայ բազմաբէն ի գատ՝ Սաղ- մոսն Երրայեցերէնէ թարգմանած է ի Հայ, ինչպէս նաև Սիմէօնի Մագիստրոսի «Յաղա- գըս Զօրութեանց Կրեւեաց» երկն 1783 ին՝ գրաբար ձօխ և ընտիր լեզուաւ: Սոյն մեծա- նուն Դպիր՝ պատմական և թարգմանական ուրիշ գործեր ևս ունեցած է, և տասնութեան հատընտիր քերթուածներ յօրինած ու գրած իւր աշխատանոցին, Պալատու եկեղեցւոյն դազաղապահ սենեկին մէջ Անտիական հոսու- կէն ցխոր ծերութիւն գրական երկերով պա- րապած է, ու դարուս սկիզբն վախճանած և թաղուած էտիրնէ Դափուի գերեզմանա- տունը, ոյր փառակերտ տապանաքարն Պէզ- ճեան Յարութիւն Ամիրա կանգնել տուած է ի հուսկ պատիւ ժամանակակից բազմիմաստ պատուելոյն:

Փորձուեցանք տապանագիրն գաղափարել, և սակայն ցաւ ի սիրտ լեցինք Շարականագէտ Պալատցի Տիրացու-Կարապետէն թէ եկեղեցւոյ մը շինութեան առթիւ չինայուելով այդ պատմական տապանաքարին՝ խորտակմամբ հանուեր տարուեր է։ Եւ երբ ցանկացինք գէթ տապանագրին օրինակն տեսնել, նա ինքն յայտնեց թէ կրնայ գտնուիլ այն ի Գատը-Գիւղ աստղճավաճառ Մեծ. Յովհաննէս և Կիրակոս հարազատաց քով։

(4) Այս բազմադրիւն քահանայն, աշխարհականութեան ատեն, նաև ուսուցիչ եղած է ընդ միշտ յիշատակելի Օտեան Պողոս Ամիրայի Պայազատաց։

(5) Այժմեան Պալատու Ս. Եկեղեցւոյ Տ. Մեսրոպ քահանայի հաւը՝ Տ. Մելքոն քահանայ ժամանակակից պատմութիւն մը գրած է կ'ըսուի, յորում երեմիա Չէլչպիի մի կարեւոր նշանակութեամբ կայ եղեր։

(6) Այս բարեհամբաւ վարժարան՝ 1876 Յուլիս 1 ին փակուած է։ Ա. Յ. Ա.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Վերոյեղեալ խորագրի տակ անգլիական հարուստ և օգտաշատ գրականութենէ նըշանաւոր գէթեր ընթերցողաց ծանօթացնել պիտի լինի այս յօդուածներու նպատակըն։ Դիտելի է արդարեւ թէ անգլիականին նման ճոխ և ընտիր գրականութեան մը վրայ շատ քիչ ծանօթութիւն ունինք, մինչ կարգ մը անկարեւոր օտար հեղինակաց գործերն և երբեմն ալ կենսագրական մանրամասնութիւնքն ծանօթ են հայ ընթերցողին։ Առաջադրեալ նպատակին գծուարութիւններն յօդուածագրէն աւելի ոչ ոք կրնայ զգալ. այլ վստահելով ընթերցողաց ներողամտութեան, յօդուածագիրն պիտի ջանայ նպատակին առաջ տանիլ՝ գրելով անգլիական հին և նոր կարեւոր հեղինակաց կենացը և գործոցը վրայ, սրջափ որ կը ներկն շարաթաթերթի մը անձուկ էջերն և ուսանողի մը ուղ ժամերն։

Չ Օ Ս Ը Ր (Chaucer)

Այս յօդուածոցս շարքին մէջ գէթ անգամ մը « կարգ ու կանոն » յարգած կը լինիմ, ըսկըսելով Չօսըրէ, որ արժանեօք կոչուած է « Հայր Անգլիական բանաստեղծութեան »։

Տասն և իններորդ դարու վերջի կիսուն մէջ Լոնտոնի ծանօթ ոք ստիպուել թերևս ընդունիլ Քարլայի խօսքը թէ՛ « Լոնտոնի մէջ բանաստեղծ չծնիր »։ Գիտեմք սակայն թէ Անգլիոյ ամենէն մեծ բանաստեղծը, Չօսըր, Սրէնսըր և Միլտոն, ծնած են Լոնտոնի մէջ, թո՛ւ անգլուգական Շէյքսպիրն որ կենացը մէկ կարեւոր մասն անցուց Անգլիոյ օտանին մէջ։

Չօսըրի ծննդեան թուականն մօտաւորապէս ճշգրտելով կը դրուի 1328ին։ Սորա ապրած դարուն ծանօթանալ անմիջական կարեւորութիւն ունի, զի յայնժամ աւելի դիւրաւ կրնամք բնութենէ թէ որպիսի գծուարութեանց ենթակայ էր այս մեծ բանաստեղծըն։ Յայտնի է պատմութեան ուսանողին թէ այդ միջոցին — Վարդգ դարուն — Անգլիոյ մէջ կը գործածուէին երկու իրարմէ տարբեր լեզուներ։ Գաղիարէնն յատուկ էր ազնուականաց, իսկ Դիւղոնեանն՝ հասարակ

ժողովրդեան։ Անկլօ-սաքսոն և Անկլօ-նորման լեզուական երկու ճիւղերն կը խօսուէին Չօսըրէ առաջ։ Տակաւ առ տակաւ սակայն, երբ միջին դարուց ստրկական գրութիւն ջնջուելով, ազգի մը տարբեր դասակարգերու իրարմէ կախում ունենալն զգալի եղաւ, յայնժամ և երկու լեզուներ ի մի ձուլեցան և աէրն ու ծառայն իրարու հետ խօսեցան մի և նոյն լեզուաւ։ Չօսըր գրել սկսելէ առաջ, երկու լեզուներ գոյութիւն ունէին յ'Անգլիա. երբ նա վար դրաւ գրիչն, գործնականապէս մէկ լեզու կար և կայ ց'այսօր, որպէս և մէկ ժողովուրդ։

Չօսըրի ընկերային կենաց վրայ ծանօթութիւն իւր իսկ երկերէ կ'ստանամք։ Օքսֆըրտ համալսարանին մէջ վարած է իւր ընթացքն. տասն և ութ տարեկան հասակին մէջ կը գրէր իւր առաջին քերթուածն սիրոյ վրայ, նիւթ մը որ Մուսայից զուակաց առաջին ներշնչումն է կարծես որ ի գիր կ'առնուն։ Եղուարդ Գ ի և Բիչարտ Բ ի արքունեաց մէջ պատուաւոր գիրքեր ունեցած է Չօսըր։ Մեծաւ մասամբ ազնուականի մը կենաց վարած է ուրեմն Անգլիական բանաստեղծութեան հայրն, թէ և ամիսներով ալ բանալին մէջ մնալու գծադրութիւնն ունեցած։ Կենացը վերջին մասն առանձնութեամբ անցնելով, 1400 Հոկտ 25ին կը վերջանայ իւր կեանքն ի հասակի 72 ամաց։

Արդ, փորձեմք գաղափար մը կազմել Չօսըրի գլխաւոր հեղինակութեան պարագայիցը վրայ, զի աղկէ աւելին անկարելի է աղկնկալել առանց ընթեռնուութեան իսկ գործը։ Տարակոյս չկայ բնաւ թէ « Քէնգրըպըրիի պատմութիւն » ն է Չօսըրի գրուի գործոցն։ Ըստ ոմանց, սոյն գործի գաղափարն թելադրուած է Պօքաչիոյի տանօրհակին։

Քէնգրըպըրիի Պատմութեանց յատակագիծըն է հետեւեալն։ Չօսըր՝ Քէնգրըպըրի (Անգլիական գաւառ մը) ուխտի երթալու համար Լոնտոնէ ճամբայ ելնելէ առաջ, կ'երթայ պանդոկ մը ուր ըստ սովորութեան կը յուսայ հանդիպիլ ուրիշ ուխտաւորաց։ Դիւպուածն անդ կը բերէ քսան, և ինն անձանց խմրակ մը, անգլիական ընկերութեան ամէն դասակարգի ներկայացուցչաց կատարեալ հաւաքում մը՝ Ասպետէն մինչև յետին գործաւորն։ Պանդոկին զուարթ աէրն ընթրիքէն վերջ, երբ լեզուներ կը թուլան և սրտեր կը բացուին, կը յայտարարէ թէ այսպիսի ընտրեալ խմրակի մը հանդիպած չէ բնաւ, և կը յարէ թէ հետեւեալ առաւօտուն ինքն ևս ընկերանալով ուխտաւորաց խմրակին, զուարճալի խաղեր պիտի գտնէ ճամբուն համար։ Պանդոկապետը կ'առաջարկէ որ իւրաքա՛ջ իւր ուխտաւոր, մեր բանաստեղծն ալ մէջն ըլլալով, պատմէ երկու պատմութիւն Քէնգրըպըրիի ճամբուն վրայ և երկու հատ ալ Լոնտոն վերադարձին, և ս'ով որ միաձայն հաւանութեամբ ամենէն յաջող պատմիչն հուշակուի, նա հրաւիրուել ընթրիքի մը՝ խումբին մնացեալ անդամներէն ի հաշիւ հասարակաց (և անշուշտ ի շահ մեր պանդոկապետին) պատրաստուած։ Կը հաւանին, և հետեւեալ առաւօտուն գարնան մեզմ' ու սիրուն արևով կ'սկսին իրենց ուխտադնացութիւն, ունինդրելով առաջին պատմիչին՝ Ասպետին գիւցազնական պատմութեան։

Քէնգրըպըրիի պատմութեանց վրայ այսպէս համառօտակի գաղափար մ'առնել վերջ և յիշելով նաև թէ հեղինակն այս մեծածափառ երկն գրել սկսած ատեն վաթսուն տա-

րեկան էր արդէն, զարմանալի չէ որ այս պատմութեանց մէկ մասն միայն աւարտած հասած է մեր ձեռքն։ Գաւառային խաղաղիկ կեանքն ընտրած էր Չօսըր՝ իւր այս մեծ երկն պատրաստելու համար, այլ հոն իսկ չկրցաւ պրծիլ մահուան անողոք ձեռքէն, որով և այժմ մեր ձեռքն հասած գործն կը բաղկանայ քսան երեք պատմութիւններէ միայն։ Ըստ Չօսըրի գաղափարականին, « Քէնգրըպըրիի Պատմութիւնք » պիտի պարունակէին 120 կտորներ, թող յառաջարանն և այլ յաւելուածներ որք նաև հեղինակին ծրագրին մէջ չընէին։ Երագիրը յիշուել խիստ ընդարձակ էր և մեր ձեռք գտնուած պատմութեանց մէջ իսկ դիւրին է տեղ տեղ նշմարել վերապահումներ որք կը ցուցնեն թէ հեղինակն ամբողջովին չէ սարգած իւր միտքն և զգացումներն։ Անկատար լինելով հանդերձ, « Քէնգրըպըրիի Պատմութիւնք » հատորն ցայսօր անյագութեամբ կը կարդացուի անգլիագէտ ընթերցողներէ։ Այս օր իսկ կարելի է գտնել Քէնգրըպըրիի Պատմութեանց ձեռագիր օրինակներն, որք անտարակոյս ցոյց կուտան այս նշանաւոր գործին վայելած ժողովրդականութիւնն տպագրութեան կիրառութենէն առաջ։ Իսկ տպագրութիւնը յԱնգլիա մտնելէ յետոյ, տպագրեալ երկրորդ գիրքը կը լինի Չօսըրի « Պատմութիւնք »։ այս ալ նմանապէս կրնայ գրասական մը համարուիլ Չօսըրի երկին նախապատուութեան համար։ Յիշեմք վերջապէս թէ Քէնգրըպըրիի պատմութիւնն կը բաղկանայ 17,385 տողերէ։ Սոյն պատմութեանց երկուքն միայն են արձակ ոճով, իսկ մնացեալք ռոտանուոր։ Արձակ պատմութիւններէ կըրնամք նպատաւոր գաղափար մը կազմել Չօսըրի գրականութեան երկու տարբեր ճիւղերու մէջ ցոյց տուած վարպետութեան մասին։ « Քէնգրըպըրիի Պատմութիւնք » կարգացած ատեն չյոգնիր մարդ. գողտրիկ ոճով և կենդանի գոյներով տարբեր դասակարգի մարդիկ քեզ կը ներկայացնէ հեղինակն։ Սոյն պատմութիւնքն մինչ իսկ երբ առասպելի շափ անհատաւոր լինին, տակաւին հրապուրիչ ներգործութիւն մը կը թողուն ընթերցողին վրայ, և գոհ ընթերցողն կ'օրհնէ իւրովի որ Չօսըր երբէք ծնաւ այսպիսի գաղափար մը։ Քէնգրըպըրիի պատմութիւն հատորն ամէն անգլիագէտ գրասիրի գրատան զարդն պարտի համարուիլ։

Չօսըր ունի նաև կարգ մը երկրորդական երկեր որոց անուններով ընթերցողին յիշողութիւնն յոգնեցնել աւելորդ է թերևս։ Յիշեմք միայն « Սիրոյ կտակն » անուն գործը որ ամբողջովին գրեց Լոնտոնի Աշտարակին մէջ բանտարկուած ատեն։

Եւ արդ, Չօսըրի վրայ ըրած մեր այս համոտաւ և թերի նկարագրութիւն փակելէ առաջ, յիշեմք նաև թէ Չօսըրի գրածներն դիւրաւ հասկնալու համար Գաղիարէն լեզուի ծանօթութիւնն մեծապէս կը նպաստէ ընթերցողին, զի որպէս ըսինք, իւր գրութիւնք յաճախ կը պարունակեն գաղիարանութիւններ։

Փալով գրագիտաց դասաստանին, մի քանի նշանաւոր յիշատակութիւններով կը շատանամք։ Տօթթ. Ճօնսըն իւր համալուար բառարանի նախարանին մէջ Չօսըրի անկարկելով, կ'ըսէ. « Նա էր առաջին բանաստեղծն որ գրեց բանաստեղծօրէն »։ Հալլամ՝ Տանգէի և Փեթրարէի կարգին մէջ կը գնէ զնա։ Տրայարն՝ Հոմերի և Վիրգիլի պատուոյն կը բարձրացնէ Չօսըր։

Վ Է Պ Ք Ի Շ Է Ք Ս Բ Ի Ր Ա Յ (1)

Ա.

ՌՈՄԼԵՕ ԵՒ ԺԻՒԼԻԵՂ

Վերոնայի երկու ամենէն երեւելի գերդաստանքն էին ճոխ Գարիւլէշներն և Մոնդակիւններն: Այս երկու տոհմերուն մէջ հինաւորաց վէճ մը կար, որ այնպէս սաստկացած և այնպիսի անհաշուելի ու մահացու թշնամութեան մը պատճառ եղած էր որ գոտութիւնը տարածուած էր մինչև երկուց կողմանց հեռաւորագոյն ազգականաց, բարեկամաց ու կուսակցաց մէջ, այնպէս որ Մոնդակիւններու մի ծառային չէր կարող պատահիլ Գարիւլէշներու մի ծառային, ո՛չ ալ Գարիւլէշ մը զիպուածով կրնար հանդիպիլ Մոնդակիւնի մը՝ առանց տեղի տալու փոխադարձ թշնամանաց և մերթ արիւնհեղութեան իսկ. և յաճախաբէս էին այսպիսի պատահումներէ ծագած կռիւներ ու կը խռովէին Վերոնայի փողոցաց երանաւէտ հանդարտութիւնը:

Գարիւլէշներու գերդաստանին ծերունի պետն մեծ հացկերոյթ մը տուաւ, որում հրաւիրուեցան շատ գեղեցիկ տիկնայք և շատ աղնուական պարոնայք: Վերոնայի համայն համբաւեալ գեղուհիք անգ էին, և ամէն եկողներ լաւ յնդուներութիւն կը գտնէին, միայն թէ չվերաբերէին Մոնդակիւններու տան: Գարիւլէշներու այս հանդիսին ներկայ էր Ռոզալին, զոր կը սիրէր Ռոմէօ, ծերունի Մոնդակիւնի որդին. և թէպէտ վտանգաւոր էր Մոնդակիւնի մը համար տեսնուիլ այդ ակմբի մէջ, սակայն և այնպէս Պէնվոլիօ, Ռոմէօյի բարեկամներէն մին, համազօգ քրտասարդ ազնուականն երթալ հոն զիմակաւորեալ, որպէս զի կարենար տեսնել իւր Ռոզալինն և, տեսնելով զնա, բազմապէս Վերոնայի մի քանի հատընտիր գեղեցկութեանց հետ, որք (կ'ըսէր) իրեն կարապն իւր աչքին իրրե ուրի մը պիտի երևցնէին: Ռոմէօ շատ չէր հաւատար Պէնվոլիօյի ըսածին, բայց Ռոզալինի սիրոյն համար հաւանեցաւ երթալ. վասն զի Ռոմէօ անկեղծ և խանդավառ սիրող մ'էր, և շատ գիշերներ արթուն կը հսկէր առ սիրոյ, ու կը փախչէր ընկերութենէ՝ միայնակ մտածելու համար իւր Ռոզալինին վրայ, որ կ'արհամարհէր զինքն ու սիրոյ կամ քաղաքավարութեան դուզնագոյն ցոյցով մ'իսկ չէր վարձատրեր իւր սէրը. ուստի և Պէնվոլիօ կը բազմար բուժել իւր բարեկամն իւր այս դժբախտ սէրէն՝ ցոյց տալով նմա այլ և այլ կիներ և ընկերութիւն: Գարիւլէշներու այս երեկոյթին զնաց ուրեմն զիմակաւոր երիտասարդըն Ռոմէօ Պէնվոլիօյի և իւրեանց բարեկամ Մերգուլիօյի ընկերակցութեամբ: Մերունին Գարիւլէշ սղունեց նոցա գալուստը, և ըսաւ թէ այն տիկնայք որոց ստից մասններն փապարած է չէին նեղուեր՝ պիտի պարէին անշուշտ իրենց հետ: Եւ ծերունին ուրախ և

զուարթ էր, և կ'ըսէր թէ ինքն ալ զիմակ գրած էր իւր երիտասարդութեան ատեն և կրցած էր գեղանի կնոջ մ'ականջն ի վայր սիրային վէպ մը փոխառլ: Եւ պարեւու ինկան. և ահա՛ յանկարծ Ռոմէօ յափշտակուեցաւ կընող մը ծայրայեղ գեղեցկութենէն, որ կը պարէր անգ, որոյ փայլին սողն և կը թուէր նմա թէ կը նսեմանար ջահից լոյսն, և որոյ հրաշալի գեղն կը թուէր փայլիլ գիշերոյն մէջ որպէս շողողուն անդամանդ մը խափշիկի մը ճակտին վրայ. — գեղեցկութիւն կարի թանկ վայելման համար, կարի մեծագին երկրի՛ համար. ձիւնափայլ աղաւնի աղաւուց երամի մը մէջ (կ'ըսէր), այնքան իւր շնորհալի գեղն ու հրապոյրք կը գերազանցէին իւր ընկերուհեաց յատկութիւնքն: Երբ նա այս գովեստի խօսքերը կ'արտասանէր, Գարիւլէշի եղբորորդին՝ Դիպալդ, որ մտիկ կ'ընէր, ճանչցաւ ձայնէն թէ Ռոմէօ էր: Բա այս Դիպալդ, որ կը քոտ ու կը րահոտ րնաւորութիւն ունէր, չէր կրնար հանդուրժել որ Մոնդակիւն մը զիմակի մը քօղին տակ գար ծաղրել, որպէս կ'ըսէր, իւրեանց հանդէսներն: Եւ կը գոռար ու կը մոլեգնէր, և կ'ուզէր սպաննել երիտասարդ Ռոմէօն: Բայց իւր հօրեղբայրն, ծերունին Գարիւլէշ, թոյլ չտուաւ նմա ո՛ր և է նախատինք ընել այն պահուն, թէ՛ ի յարգանս իւր հիւրերուն և թէ՛ վասն զի Ռոմէօ իրրե ազնուական վարուած էր, ու Վերոնայի մէջ ամէն լեզուք լաւ կը խօսէին իւր վրայ ու կը վիպէին թէ առաքինի ու բարեկիրթ երիտասարդ մ'էր նա: Դիպալդ, յակամայիցս համբերելու ստիպեալ, զսպեց ինքզինքն, այլ երգում ըրաւ որ այդ անարգ Մոնդակիւնն ուրիշ ատեն ծանրագնի պիտի հատուցանէր իրեն փոխարէն այն յանդգնութեան որով նա սպրդած մտած էր իրենց ընկերութեան մէջ:

Յետ պարուն, Ռոմէօ զիտեց թէ ո՛ւր կը կենար ազնուական կիներ. և իւր ծպտման շնորհիւ՝ որ թուի թէ մասամբ կրնար ազատութիւնը ներելի ընել, քաղաքավարական վարմունք մը համարեց նորա ձեռքը բռնել, կոչելով զայն մի սրբազան մասունք, զոր եթէ կը պղծէր ի նա հպելով, իրրե ջերմեռանդ ուխտաւոր, կը շառագնէր իւր ըրածին վրայ և պատրաստ էր համբուրել զայն ի քաւութիւն: « Բարի ուխտաւոր, պատասխանեց տիկինն, ձեր ջերմեռանդութիւնն յոյժ քաղաքավար ու բարեկիրթ կ'երևի սուրբերն ունին ձեռներ, որոց ուխտաւորք կրնան դաշխիլ բայց համբուրել ոչ: » — « Սուրբերը շրթունք չունի՞ն, և ուխտաւորք ևս », ըսաւ Ռոմէօ: — « Այո՛, ըսաւ տիկինն, ունին շրթունք զորս աղօթելու պարտին դործածել: » — « Օ՛հ ուրեմն, սիրելի սրբուհիդ իմ, ըսաւ Ռոմէօ, լսէ աղօթս և ընդունէ՛ զայն, ապա թէ ոչ կը յուսահատիմ: » Այսպիսի ակնարկութեանց ու սիրային նրբախօսութեանց զբաղուած էին, երբ գեղանի մանկամարդ կիներ կոչուեցաւ իւր մօր կողմանէ: Եւ Ռոմէօ տեղեկութիւն խնդրելով նորա մօր վրայ, իմացաւ թէ այս կիներ՝ որոյ անըման գեղեցկութիւնն զինքն յապուշ կրթած էր՝ էր ծաղրահասակն Ժիւլիէթ, Մոնդակիւններու մեծ սիրելի մէջ Գարիւլէշի դուստրն ու ժառանգն, և թէ անգիտարար սիրտ տըռած էր իւր թշնամոյն: Այս բան խռովեց զինքն, բայց չէր կարող զնա սիրելէ յետս կեցնել զինքն: Նոյնքան յուզուեցաւ և Ժիւլիէթ՝ երբ վերահասու եղաւ թէ այն ազնուական երիտասարդն՝ ոյր հետ խօսակցած էր

Ռոմէօ էր, Մոնդակիւն մը, վասն զի նա եւս Ռոմէօյի համար զգացած էր նոյն յանկարծական ու անխորհուրդ սէրն որով երիտասարդն վառուեր էր իրեն համար. ու սիրոյ զարմանալի ծնունդ մ. կ'երևէր իրեն այս թէ ինքն պարտէր սիրել իւր թշնամին և իւր սէրն զնեւ անգ ուր ընտանեկան նկատմունք պարտէին զինքն յատկութիւն յորդորել:

Երբ կէս գիշեր եղաւ, Ռոմէօ և իւր ընկերք մեկնեցան. բայց սքքա ընդ հուպ կորուսին զնա, վասն զի չկարենալով հեռի մնալ այն տնէն ուր իւր սիրտն էր թողուցեր, Ժիւլիէթի տան ետին գտնուող մրգաստանի մը պատէն ցատկեց անցաւ: Երկար ատեն չէր կեցած անգ, որոճալով իւր նորարծարծ սիրոյն վրայ, և ահա Ժիւլիէթ երևեցաւ վերէն պատուհանի մ'առջև, որոյ մէջէն իւր շքնաղ գեղեցկութիւնն կը փայլէր յանկարծալոյս իրրե նորածագ արեգակն, և լուսինն, որ ազօտ լուսով մը կը լուսաւորէր պարտէզը, կը թուէր Ռոմէօյի իրր վտահար և տոգոյն՝ այս նոր արևուն գերափայլ պայծառութեան վերայ նախանձարեկ: Եւ զի կոյսն կը կենար անդ ձեռն ի ծնօտ, երիտասարդն կը բազմար ըլլալ ձեռնոց մ'այդ ձեռքին վրայ՝ որպէս զի կարենար դաշխիլ նորա այտին: Բոլոր այս միջոցիս առանձինն խոկալով խոր հառաչանք մ'արձակեց աղջիկն ու բացազանջեց « Աւա՛ղ »: Ռոմէօ հիացեալ մնաց լսելով նորա խօսիլն, և ըսաւ մեղմօրէն, առանց լսելի ըլլալու նմա. « Ո՛հ, խօսէ՛ տակաւին, հրեշտակ լուսազեղ, զի այդպէս դու կ'երևիս, կեցած գլխոյս իմ վերեւ, իրրե թեւաւոր պատգամաբեր մ'երկինքէն իջած, յոր ակնապիշ նայելու ատեն յորսայս կ'անկինն սըխրացեալ մահկանացուք »: Նա, չգիտնալով թէ զինքն լսող կար, և լի այն նոր տարփանքով որում ծնունդ տուած էր այն գիշերուան պատահումն, յանուանէ կը կոչէր իւր սիրականն զոր բացակայ կը կարծէր. « Ո՛վ Ռոմէօ, Ռոմէօ, կ'ըսէր, ի՞նչու համար Ռոմէօ ես. ուրացի՛ր հայրդ ու մերժէ՛ անունդ իմ սիրոյս համար. կամ եթէ չես ուզեր՝ երգուընցի՛ր միայն սիրել զիս, և ես ա՛լ կը դադրիմ Գարիւլէշ մ'ըլլալէ: » Այս սիրոյ խօսքին Ռոմէօ այլ եւս չկրցաւ զսպել ինքզինքը, այլ շարունակելով խօսակցութիւնն՝ իրր թէ անձամբ իրեն ուղղուած ըլլային այդ բանք, և ո՛չ պարզապէս երևակայութեամբ, խնդրեց անկէ Սէր անուն տալ իրեն, կամ ո՛ր և է մի այլ անուն որ հաճոյ լինէր իրեն, վասն զի այլ եւս ինք Ռոմէօ չէր, եթէ այդ կոչում անախորժ էր իրեն: Ժիւլիէթ, պարտիզին մէջ մարդու մը ձայն լսելով, յուզուեցաւ և ի ըսկըզբան չէր գիտեր թէ ո՛վ էր այն որ գիշերոյն ու մթութեան շնորհիւ զիպուածով իւր սրտին գազանիքն իմացեր էր, բայց երբ Ռոմէօ վերստին խօսեցաւ, թէպէտ և իւր ականջք տակաւին այդ լեզուէն դուրս ելած հարկեր բառ չէին վայելած, բայց սիրով մը լսողութիւնն այնքան նուրբ ու ճիշդ է, որ անմիջապէս ճանչցաւ թէ խօսողը երիտասարդ Ռոմէօն էր: « Ի՞նչպէս եկար այստեղ, հարցուց Ժիւլիէթ, և սրբաւ առաջնորդութեամբ: » « Սէրը զիս առաջնորդեց, պատասխան տուաւ Ռոմէօն. նուուզիլ չեմ, սակայն եթէ այնքան հեռի լինէիր ինձմէ որքան ընդարձակագոյն հեռի լինէիր թիջուած հեռաւորագոյն ծովեզրը, դարձեալ պիտի զիմադրուէի ամէն վտանգի մի այսպիսի թանկագին դանձի համար: Ծառագունանք մը պատեց Ժիւլիէթի գէմքը, թէպէտ անտես Ռոմէօյէ գիշերոյն

(1) Չարլս Լամ, անգղիացի նշանուոր գրողէան ու բանաստեղծը, իւր Tales from Shakespeare անուն գործոյն մէջ, որ փոքրիկական եղած է Միքղիս, համառօտած է վէպի ձևով իւր աղգակից անընդհան թատերադրակն երկոյ մեծ մասը, քայլ առ քայլ հեռուելով թատերախաղուց տեսարաններուն և ջանալով որչափ կարելի է գործածել նոյն իսկ Շէքսպրի բառերն ու բացատրութիւնքն: Այդ գործէն ահա՛ կը թարգմանուինք ներկայ հասուածն, որպէս և զայն զորս հետագը հասել պիտի ներկայացնենք Մալիկի ընթերցողաց՝ մեր հասարակութիւն: Շէքսպրի անմահ հանձնարոյն հետ փոքր ի շատէ ծանօթացնելու վախաբանօք: Ն. թ.

պատճառաւ, երբ խորհեցաւ թէ ինչպէս առանց դիտաւորութիւն ունենալու՝ յայտնած էր Ռոմէոյի նորա վրայ զգացած սէրը: Յօժարակամ յետոս պիտի կոչէր իւր խօսքերն, եթէ կարելի լինէր: Ռոմէո իւր իսկ բերնէն լսած էր իւր սիրոյն մի խոստովանութիւնն՝ երբ ինք չէր կարող երևակայել թէ իւր մօտ կը գտնուէր նա: Ուստի պարկեշտ անկեղծութեամբ մը, զոր ներելի կ'ընծայէր իւր անակնկալ կացութիւնն, հաւաստեց ճշմարտութիւնն այն խօսքերուն զոր լսած էր երիտասարդն, և, ձայնելով զնա գեղեցիկ Մոնիզակիս (սէրը կարող է քաղցրացնել մի դառն անուն), աղաչեց զնա որ իւր այնպէս դիւրաւ անձնատուր լինելու պարագայն չվերագրէ թեթևամտութեան կամ մի անարժան գիտաւորութեան, այլ գորա յանցանքը, եթէ յանցանք մ'էր այն, զնէ գիշերուան այն անյուսալի պատահարին վրայ որ այնպէս տարօրինակ կերպիւր ի վեր հանած էր իւր մտածութիւնքն:

Ռոմէո կ'սկսէր գերկինս վկայ կոչել թէ բընաւ բան մ'այն աստիճան հեռու չէր իւր գաղափարներէն որչափ անպատուութեան բիծ մը իսկ չիկել այնպիսի պատուաւոր պարկեշտափայլ օրիորդի վրայ, երբ սա կեցուց զինքն, խնդրեց որ չերդնու. վասն զի թէ և ուրախ էր ի նա, բայց գոհ չէր այդ գիշերուան դաշինքէն, զոր յոյժ հապճեպեալ, յոյժ յախուռն, յոյժ յեղակարծ կը գտնէր: Այս սիրային տեսակցութենէն ի բաց կոչուեցաւ իւր ստընտուին կողմանէ, որ իւր հետ կը պառկէր, և որ կ'ըսէր թէ ժամանակ է ննջելու, վասն զի արշաւոյսը մօտ էր, բայց փութով ետ դառնալով երեք կամ չորս բառ եւս ըսաւ Ռոմէոյի, որոյ իմաստն էր թէ, եթէ պատուաւոր էր նորա սէրը և նպատակն՝ ամուսնութիւն, հետեւեալ օրը պատգամաւոր մը պիտի յղէր նմա՝ որպէս զի որոշէր իրենց ամուսնութեան օրն ու տեղին, երբ ինքն ալ բոլոր իւր ճակատագիրքն պիտի դնէր նորա ոտից առջև և պատրաստ պիտի լինէր ամենուրեք աշխարհի մէջ հետեւիլ նմա իբրև իւր տիրոջ: Մինչ այս կէտը կ'որոշէին, ժիւլիէզ բազմիցս կը կոչուէր իւր ստնտուէն, և ներս կ'երթար ու կը վերադառնար, ու դարձեալ կ'երթար ու դարձեալ կը վերադառնար, որովհետև այնքան դժկամակ ու նախանձոտ կ'երևէր Ռոմէոյի իրմէ հեռանալուն որչափ կոյս մ'իւր թռչնելին համար, որում թող կուտայ մի քիչ հեռու ցատկել իւր ձեռքէն, բայց զոր իսկոյն առ ինքն կը քաշէ մի մետաքսեայ թելով. ոչ նուազ և Ռոմէո կը գըժկամակէր բաժնուիլ, վասն զի սիրահարաց համար քաղցրագոյն երաժշտութիւնն գիշեր ատեն միմեանց լեզուին բարբառքն են: Այլ հուսկ ուրեմն բաժնուեցան, փոխադարձաբար մաղթելով անոյժ քուն և հանգիստ այն գիշերուան համար:

Լուսնալու մօտ էր երբ իրարմէ զատուեցան: Ռոմէոյի միտքն այնքան գրաւեալ էր իւր սիրուհւոյն ու այն բարբառաստիկ հանդիպման խոհերովն որ անկարելի էր իրեն քնանալ. ուստի, փոխանակ տուն երթալու, իւր քայլերն ուղղեց դէպ ի մերձակայ վանք մը գտնելու համար անդ եղբայր Լաւրենտիոսը: Բարի կրօնաւորն արդէն ելած էր անկողնէն իւր բարեպաշտական պարտքերը կատարելու, բայց զերիտասարդ Ռոմէոն այնքան կանուխ իւր տունէն դուրս տեսնելով՝ իրաւամբ ենթադրեց թէ այն գիշեր չէր պառկած, այլ երիտասարդական սիրոյ յու-

զում մ'արթուն պահած էր զինքն: Իրաւունք ունէր Ռոմէոյի արթնութեան պատճառ սէրը դնելու, բայց առարկային վրայ սխալեցաւ, երբ կարծեց թէ Ռոզալինի սիրոյն համար անքուն մնացած էր նա: Սակայն երբ Ռոմէո յայտնեց իւր նոր սէրը ժիւլիէզի վրայ, և նորա օգնութիւնը խնդրեց նոյն օր զիրենք ամուսնացնելու համար, սուրբ մարդն վեր բարձրացուց աչքերն ու ձեռներն՝ Ռոմէոյի սիրոյն յեղակարծ փոփոխութեան վրայ զարմանաց զգացումով մը, վասն զի գիտակ էր երիտասարդին առ Ռոզալին տածած բուռն սիրոյն և կրած մերժմանցն համար նորա վշտին ու արտասուալից ողբերուն, և ըսաւ թէ երիտասարդաց սէրն իրենց սրտին մէջ չէ, այլ աչաց: Բայց, երբ Ռոմէո պատասխանեց թէ յաճախ իրմէ իսկ յանդիմանուած էր Ռոզալինի վրայ ունեցած յիմար սիրոյն համար, որոյ փոխարէնն չէր կարող ստանալ ի նմանէ, մինչդեռ ժիւլիէզ կը սիրէր զինքն ու կը սիրուէր իրմէ միանգամայն, եղբայրն աստիճան մը համոզուեցաւ նորա փաստերէն, և խորհելով թէ ժիւլիէզի և Ռոմէոյի մէջ ամուսնական կապակցութիւն մը կարենար թեքելու բարեպատեհ առիթ մ'ըլլալ Գարիւէզներու և Մոնիզակիւներու մէջ բացուած հինաւուրց խրամատը կարկատելու, որոյ մասին ո'չ ոք աւելի կը ցաւէր քան այս բարի կրօնաւորը որ երկու գերդաստանաց ալ բարեկամն էր և յաճախ թէպէտ յանօգուտս՝ միջամտած էր գժտութիւնը բառնալու համար, մասամբ քաղաքագիտութեամբ ու մասամբ ալ երիտասարդ Ռոմէոյի վրայ ունեցած սէրէն շարժեալ, որում չէր կրնար բան մը մերժել, ճերմակին հաւանեցաւ միացնել իրենց ձեռներն յամուսնութիւն:

Այժմ արդարև երջանիկ էր Ռոմէո. և ժիւլիէզ, որ իմացաւ նորա խորհուրդն այն պատգամաւորին միջոցաւ զոր ըստ իւր խոստման յղած էր առ նա, փութաց դիմել կանուխ եղբայր Լաւրենտիոսի խոցը, յորում իւրեանց ձեռներ միացան ի սուրբ ամուսնութիւն, բարի կրօնաւորն հայցելով յերկնից հաշտ ահամբ հայիլ այդ գործոյն և Մոնիզակիւներու և Գարիւէզներու այդ երկու շառաւիղներուն միութեան մէջ թաղել իրենց տոհմից վաղեմի օրն ու երկարատեւ հակառակութիւնքն:

(Շարունակելի) Թարգմ. յԱնգղիականէն Ռ. Յ. Պ.



ՄԵՄ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ  
 Կ. ԵԱՎՐՈՒՆԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒՆԱՆ ԸՆԿ.  
 Կ. Պոլիս, Պահնէ Գաբու, ձէլալ  
 պէյ խան քիւ 10

Սոյն հանրածանօթ վաճառատուն ձմեռուան առթիւ ճափայէն բերել տուած է զանազան տեսակ աղնիւ և ընտիր թէյեր, ինչպէս նաև այլ և այլ մեծութեամբ ու ձևերով նկարագորդ տուփեր որք կազանդի առթիւ կրնան իբրև նուէր ծառայել: Գիները որոշ և չափաւոր: Յանձնարարութիւնք փութով և ճշգրտութեամբ կը կատարուին: 2—8

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքական ժողովն չորեքշաբթի օր ի նիստ գումարեցաւ ի խորհրդարանի Ղալաթիոյ նախագահութեամբ Ամեն. Աշըգեան Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ազն. Սահակ էֆէնտի Ղազարոսեանի և զբաղեցաւ այլ և այլ խնդիրներով:

Երեսփոխանական վիճակաց բաշխման համար նախապէս կազմեալ յանձնաժողովն հըրաւիրուած լինելով Քաղաքական ժողովոյ նոյն նստին, յանձնաժողովոյ անդամներէն ներկայ էին Վսեմ. Նուրեան էֆ, Վսեմ. Ստեփան փաշա և Ազն. Ռէթէոս էֆ. Պէրպէրեան: Ժողովը ներկայից հետ խորհրդակցութիւններ կատարելով, բացատրութիւններ առաւ պատրաստեալ տեղեկագրոյն վրայ և գործադիր մասնաժողով մը կազմեց՝ երեսփոխանական վիճակաց բաշխման և այլ յարակից գործողութեանց կատարման համար: Սոյն մասնաժողովը կը կազմեն Վսեմ. Նուրեան էֆ, Վսեմ. Ստեփան փաշա և Ազն. Ռէթէոս էֆ. Պէրպէրեան:

— Աշըգեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրն Ծննդեան շնորհաւորութիւնները պիտի ընդունի ի Պատրիարքարան՝ երկուշաբթի ժամը 7 ին:

— Գեկտ. 15ին ի Մոսկուա տեղի ունեցեր է հայագէտ Մկրտիչ Էմինի փառաւոր թաղումը: Յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գըտնուեր են զանազան ընկերութեանց ներկայացուցիչք, և հանգուցելոյն դադարին վրայ դրուեր են բազմաթիւ պսակներ: Գեկտ. 16ին, կիրակի է, Էմինի մէջ տեղի ունեցած հանդիսաւոր պատարագէն յետոյ, Գէորգեան ձեռնարանը կատարել տուեր է Մ. Էմինի հոգեհանգիստը:

— Ստացանք Արեւելեան Մամուլ ազգային և քաղաքական ամսաթերթի դեկտեմբերի ամսաթիւը: 1891 տարւոյ մէջ Ա. Մամուլ կը շարունակուի նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: Տարեկան բաժնեգինն է 80 յրշ: Ազգ. դասատուաց համար բացառաբար 50 յրշ: Բաժանորդ գրուելու համար պէտք է դիմել Զմիւռնիա առ Խմայիր-Տնօրէնն Մատթէոս Մամուրեան, կամ Կ. Պոլիս՝ Պէրպէրեան տըպարան:

— Սղամպուլ լրագրոյ դեկտ 20 (Ն. Տ.) թերթին մէջ յանուն Կարնոյ Պատր. Փոխանորդ Գեր. Շիշմանեան Սրբազանի նամակ մը հրատարակուած էր՝ ուղղեալ իւր Կարնոյ թղթակցին: Ն. Գերապատուութիւն պարտք համարած է հրապարակաւ յայտարարել թէ, ինք յանուն իւր այդպիսի թղթակցութիւն մը հրատարակելու արտօնութիւն երբէք չէ տուած Սղամպուլի թղթակցին:

— Կարնոյ ազգային վարչութիւնը հրահանգ խնդրած է Պատրիարքարանէն՝ վիճակին առաջնորդ ընտրելու համար գ'Գեր. Ղեւոնդ եպիս Շիշմանեան:

— Ծննդեան տօնէն յետոյ վերստին կ'սկսի հրատարակուիլ Մանգուլէի էֆէտաւ լրագիրն որ ժամանակէ մը ի վեր դադրած էր:

— Աշըգեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրն Կաղանդի առաւօտ Մայր Եկեղեցի իջնելով, ներկայ գտնուեցաւ կրօնական արարողութեանց, և ապա Պատրիարքարան ելնելով՝ ընդունեց այցելուաց շնորհաւորութիւններն:

— Նոր-Ջուզայու և Հնդկաստանի վիճակին առաջնորդ նշանակուած է նորապսակ Եսայի եպիսկոպոսն Ասատուածատրեանց:

— Ներքին գործոց նախարար Վսեմ. Միւ- նիր փաշա, Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշա, Խորհրդական Վսեմ. Յարութիւն փաշա և Մէքթուպճի Միւնիր պէյ՝ Նոր Տարւոյ առթիւ իրենց այցեւորման- րը զրկած են Ամեն. Ս. Պատրիարք հօր:

— Պատրիարքական փոխանորդ Գեր. Գէորգ Մ. վարդապետ հիւանդ լինելով, ըստ հրամանի Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Գեր. Մովսէս Մ. վարդապետ Կէօմրիւհիճեան ընկերակցութեամբ Տ. Ոորէն առաջ քահա- նայ Փէշկիվանեանի երեքշարթի առաւօտ ուսուական դեսպանատունը գնաց, Նոր Տար-ւոյ առթիւ շնորհաւորական այցելութիւն տալու: Տ. Մովսէս վարդապետ և Տ. Ոորէն քահանայ ընդունուեցան ուսուական դեսպան Վսեմ Պ. Նէլիտաֆի կողմէ, որով յանձնե-ցին Ս. Պատրիարք Հօր այցեւորման և Նոր Տարին շնորհաւորեցին ի դիմաց Ն. Ամենա-պատուութեան: Ի յօրէն յետոյ Ռուսական դեսպանատան կողմէ թարգման մը Պատրիար-քարան եկու և Նոր Տարւոյ առթիւ շնորհա-ւորական այցելութիւն տուաւ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն: Անգլիական և պարս-կական դեսպանատանց թարգմանք ևս սոյն օր Ազգ. Պատրիարքարան եկան ի շնորհաւո-րութիւն Նոր Տարւոյ:

— Հրէից Բարունապետի տեղակալը յա-տուկ գրութեամբ մը, ուղղեալ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, շնորհաւորած է Նոր Տա-րին, ինչպէս նաեւ Ն. Ամենապատուութեան վերադարձն յաթու Պատրիարքութեան:

— Գեր. Գէորգ Մ. վարդապետ Իւթիւճեան չորեքշարթի առաւօտ հրաժարական զրկած է առ Ամեն. Ազգեան Ս. Պատրիարք Հայրն: Պատրիարքական Փոխանորդութեան առժամեայ պաշտօնէն, անձնական վստա-նողութեան պատճառաւ:

— Հրատարակեցաւ Ծաղիկ Մանկանց հան-դիսի առաջին թիւը ընդ Տնօրէն-Սմբագրու-թեամբ Մ. Ասքանազ էֆէնտիի և աշխա-տակցութեամբ ազգային նշանաւոր ուսուց-չաց և գրագիրաց:

Ծաղիկ Մանկանցը նոր կարգադրութեան մը համեմատ պիտի հրատարակուի ամէն ուրբաթ օր, ի բաց առեալ Յունիս և Յուլիս ամիսները: Պիտի պարունակէ

1. Երկրորդական վարժարանաց մէջ ա-ւանդեալ լեզուի, գրականական և գիտական դասուց շարք մը երեք կարգերու բաժնուած որք կը կոչուին Տարական ընթացք, Միջին ընթացք, Բարձրագոյն ընթացք:

2. Ծաղկաբազ հատուածներ ազգային հե-ղինակներէ առնուած կամ օտար մատենա-գիրներէ թարգմանուած:

3. Դասագրոց վրայ համառօտ քննադա-տութիւններ:

4. Կրթական, մանկավարժական, լեզուա-բանական, գրական և գիտական յօդուածներ ու տեսութիւններ:

5. Գաղիերէն լեզուի վարժութեան համար գաղ. ընտիր հատուածներ, հանդերձ բացառ-րութեամբ և հայերէն թարգմանութեամբ:

Բաժանորդագին տարեկան 50 վեցամս. 25. եռամս. 15. Իւրաքանչիւր թիւը 50 փարայ: Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել առ Տնօրէն-Սմբագիրն ի Պէրպլերեան տպարան:

Դիտակ 1891 ՏԱՐԸՆՅ. գրեց Գ. Կ. Փէշտի-մաճեան. 62 էրես: Տպագր. Մարգարեան: Գին 40 փարա: Կեդրոնատեղին է Մերձան Մարգարեան գրատուն: 2—3

ՀԱՒԱՏԱՐՄԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՐ

Պոլսոյ Ապահովութեան Սնտուկին տնօրէնի նախկին օգնական Լեւոն պէյ Փափագեան և փաստաբան Թընկըր Սիմոն էֆ. ի կայս. պա-լատ մատուցած են Հանրագիր մը, որ բարե-մաղթութիւններ ընելէ յետոյ վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանին, կ'ըսէ:

« Չերդ Վեհափառութեան կայս. հը-պատակներէ Հայերն, որք օսմանցիու-թեան փառքով կը փառաւորուին, օսմա-նեան կայսրութեան ծագումէն ի վեր հաւատարիմ մնացած և շնորհիւ Չերդ վեհափառութեան, երջանկութեան եւ բարօրութեան ծայրն հասած են: Չեր Վե-հափառութեան կողմէ Հայոց իւրաքան-չիւր անհատին եղած շնորհները կ'ապա-ցուցանեն թէ Հայ հպատակաց նկատ-մամբ Չեր վեհափառութեան ունեցած վստահութիւնը կատարեալ է: Թէև ոչ մէկ կերպիւ պէտք կը տեսնեմք՝ մէկ քա-նի անձանօթ անձանց անձա՛հ ընթացքին պատճառաւ՝ վերանորոգել մեր հաւա-տարմութեան հաւաստիքը, սակայն այս առթիւ ևս կը փութամք յայտարարել թէ գիշեր ցերեկ մեր ժամանակը կ'անցու-նեմք աղօթելով վասն կենաց և բարօրու-թեան Չերդ Վեհափառութեան, եւ մի-անգամայն խոնարհարար աղերսել որ Չեր կայսերական գորովագութ ակնարկը բը-նաւ չը զլանաք Չերդ Վեհափառութեան հաւատարիմ հպատակաց վրայէն, որով մնամք ամենախոնարհ ծառայք: »

Սոյն հաւատարմական հանրագիրը կը կրէ հարիւր երեսուն և եօթն ստորագրութիւն-ներ որք կը վերաբերին պետական Հայ պաշ-տօնէից, սեղանաւորաց, վաճառականաց, Ծիրբէթի Սայրիէի պաշտօնէից և այլոց:

Ի պատասխանի սոյն հանրագրոյն, հետե-ւեալ բերանայի գեկոյցն եղած է առ Լեւոն պէյ Փափագեան և Թընկըր Սիմոն էֆէնտի:

Չեր ներկայացուցած հաւատարմական հանրագիրն որ պատրաստուած էր մայ-րաքաղաքիս մէջ գտնուող կայս. Հայ հպատակաց ամէն դասակարգերու կող-մանէ, մատուցի յօտս կայսերական գա-հոյից: Մեր Օգոստոսփառ Ինքնակալը գիտէ թէ Իւր Հայ հպատակները հարիւ-րաւոր տարիներէ ի վեր բնաւ չեղած չեն կայս. կառավարութեան նկատմամբ իրենց ունեցած հաւատարմական ընթացքէն, և թէ Հայ հպատակներն երբէք չէին հա-ւաներ այդ զգացմանց հակառակող ըն-թացքի մը: Վեհ. Սուլթանի այդ հա-մազուովը ապացուցուած է մաս առ մաս մատուցեալ հաւատարմական հանրագ-րելով: Ամէն աղբի մէջ բնականաբար անկարգ մարդիկ կը գտնուին. այսպէս Հայ հասարակութեան մէջ եւս թէեւ քիչ ժամանակէ ի վեր այդ կարգի ան-ձեր երեւան ելած են, սակայն ասոնք փոքր թիւ մը կը կազմեն: Յայտնի է թէ ասոնք պիտի զղջան ըմբռնելով որ իրենց ընթացքը միտա մը պիտի պատճառէ թէ՛ իրենց և թէ՛ իրենց պատկանած հասա-րակութեան, և թէ նոյն հասարակութեան

պատկանող խելահաս և հաւատարիմ ան-ձանց կողմէ բնականաբար լինելիք յոր-դորներն պէտք եղած ազդեցութիւնը պիտի ընեն:

Մեր Օգոստոսփառ Ինքնակալը յոյժ գոհ մնաց ձեր կողմէ մատուցեալ հան-րագրոյ համար և ինչպէս Իւր բարձր գո-հունակութեան, Իմ թիաղ պատուանշանի արծաթ շքադրամը կը շնորհէ ձեզ:

Բարձրեալն Աստուած երկար ու բարե-բաստիկ կեանք շնորհէ Ն. Կ. Վեհափա-ռութեան և Իւր ամէն գործերն ի բա-րին յաջողեցէ:

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Անցեալ շաբաթ օր երկրորդ անգամ լինե-լով Եզեանաղատ ատենին առջև դռնփակ նստի մէջ տեղի ունեցաւ յեզափոխական մասնախմբին իբրև նախագահ ամբաստանեալ ուսուսակատակ Յակոբ Վարդ Պատրիարքի ու ընկերաց դատաստանը: Կարգացուեցան նա-խորդ նիստէն մնացեալ գրութիւնք և ամ-բաստանեալներէ ոմանք ալ հարցաքննուե-ցան: Դատին շարունակութիւնը յետաձգե-ցաւ ուրիշ աւուր:

— Հալէպէն, Ատանայէն Սուրիական Տրի-պոլսէն, Սարբերդէն և այս քաղաքաց չըր-ջակայներէն հետախտն բոլորովին անհետա-ցեր է:

— 1307 ելմտական տարիէն սկսեալ, կա-ռավարական պաշտօնատանց համար լինելիք գնումները՝ յատկապէս կազմեալ յանձնաժո-ղովոյ մը ձեռք տեղի պիտի ունենան:

— Կայս. հրամանի մը համաձայն, Քօմի-սիօն խանի շէնքն, որ սեպհահանութիւն է Սէնայի վարժարանին, ազատ պիտի մնայ կալուածական տուրքէ:

— Քոխեան գրութեամբ կատարելի բժշկա-կան փորձերուն համար առժամեայ հիւան-դանոց մը պիտի հաստատուի, մինչև որ կա-ռուցուի հիւժախտաւորաց յատուկ հիւան-դանոցն:

— Կրթական նախարարութեան պաշտօ-նատան մէջ կազմեալ նոր դիւան մը պիտի թարգմանէ արեւելեան ու արեւմտեան լե-զուօք գրուած նշանաւոր հեղինակութիւն-ներ:

— Սապան արտատպած է ի Փարիզ հը-րատարակեալ Օռիան լրագրոյ կարիւնէն ըս-տացած մէկ նամակին հետեւեալ մասերը:

« Կարնոյ նահանգին ընդհանուր վիճակը խիստ գոհացուցիչ է: Նահանգին ամէն կող-մը կատարեալ կարգապահութիւն ու անդոր-րութիւն կը տիրէ: Հոս գտնուող մարդ մը կրնայ զարմանք հարցնել թէ արդեօք այս այն նահանգն է, զոր անգլիական լրագիրք նկարագրած են:

« Անատոլուի ժողովուրդը՝ կայս. կառա-վարութեան բարձր հովանոյն ներքև գըտ-նուելու համար ինքզինքը բախտաւոր կը համարի: Հայ առաջնորդներէ մին յատկա-պէս ապահովութիւններ տուաւ ինձ Հայոց այս հաւատարմական զգացմանց վրայ: »

— Ենվարը Շարգիլի մէջ կը կարգաւթ թէ կայս. Իրատէ մը հրամայած է երզնկայէն դուրս աքսորել մի քանի կարճամիտներ որք իրենց պաշտօնին ու դիրքին չվայլող լե-զուաւ մը իզական վարժարաններու բաց-ման դէմ խօսելով, աղջկանց դաստիարակու-

Թիւնն իրրեւ ապօրէն ցոյց տալ ուզած են :  
 Ոստիկանութիւնն մի քանի կասկածելի անձեր ձերբակալեց իրրեւ այն չարագործներն որք վիրաւորած էին Արտաքին գործոց նախարարութեան թարգմանութեանց սենեկի քարտուղարներէն Տաղիսթանցի Ապտիւլ-քէրիմ պէյը :

— Վերջացող տարւոյն մարտի սկիզբէն մինչեւ նոյեմբեր 30, օտմ 65 վաճառարարձ նաւեր շինուած են ի Թուրքիա : Ասանց համար պէտք եղած առաջըր ձրիարար առնուած է տէրութեան անտառներէն :

— Սէլանիկի ջուրի նորակազմ ընկերութիւնը պաշտօնապէս ծանուցած է հանրագուտ շինութեանց նախարարութեան, թէ պահանջուած երաշխաւորութեան գումարն Օսմ. կայս. Պանքային յանձնուած է :

Ասիական գաւառներէ եկած տեղեկութեանց համաձայն, այդ կողմերը սաստիկ ձմեռ կ'ընէ և առատ ձիւն կը տեղայ : Տեղացիք կը կարծեն թէ ձմեռուան սաստիկութեան նայելով, ամառուան համար առատութիւն մը կրնայ յուսացուիլ :

— Բաղէշի նահանգէն դեկտեմբեր 25 թուականու հետեւեալ հեռագիրն ուղղուած է առ Բարձր. Մեծ-Եպարքոսն :

« Պահրիք գիւղախմբի միւտիրը ծանուցած է թէ Կինձ գաւառի Ճապաղըուր գաւառակի Մոսիան գիւղի ու չրջակայ գիւղերու ժողովրդէն մաս մը նոյն գիւղախմբի Պոլտասամու և Բէֆ գիւղերուն վրայ յարձակելով անդացոց գոյքերու մէկ մասը կողոպտած, երկու մարդ սպաննած և մէկ մարդ ալ վիրաւորած են : Կինձի կառավարիչն տեղեկագրելով զայս, միանգամայն ծանուցած է թէ Ճապաղըուրի գայմադամն այդ կողմերը զրկուած է արգիլելու համար կրկնուիլն այդ կախնեւորու, որք հին սովորութեանց արդիւնք են, ինչպէս նաև կողոպտուած գոյքերն ետ առնելու համար : Կինձի կառավարչին հրամաններ արուած են, որպէս զի անդորրութիւնն ու հանրային ապահովութիւնն անխախտ պահելու համար հարկ եղած անմիջական միջոցները ձեռք առնու : Այդ կողմերն Հայ չգրտնուելով, կուրն երկու կողմէն ալ իսլամներու միջեւ տեղի ունեցած է : Ենորհիւ Վեհ. Սուլթանին, նահանգին մէջ առկից գաւտ ուրիշ դէպք չէ պատահած և կատարեալ անդորրութիւն կը տիրէ : »

— Իտալիոյ առեւտրական և երկրագործական նախարարը նկատողութեան առած է Կ. Պօլսոյ իտալական Առեւտր. Սենեկի մէկ առաջարկն, արեւելից հետ Իտալիոյ առեւտրական յարաբերութիւններն ընդարձակելու համար : Ընկերութիւններ պիտի հաստատուին իտալացոց և երկրագործաց միջեւ, արեւելից այլ և այլ կողմերը առեւտրական յանձնակատար-ուղեւորներ պիտի զրկուին, իտալական արտադրութեանց յատուկ շուկայներ պիտի հաստատուին գլխաւոր քաղաքաց մէջ և Կ. Պօլսոյ մէջ ալ իտալական գրամատուն մը պիտի հաստատուի իբր մասնաձիւղ Իտալիոյ գլխաւոր մէկ դրամատան : վերջապէս ամէն կարելի եղած միջոցներ ի գործ պիտի դրուին գիւրացներու համար յարաբերութիւններն ընդ մէջ Իտալիոյ և արեւելից նաւահանգիստներու :

— Յեղափոխական մասնախումբին իրրեւ անդամ ամբաստանեալ մարանկոզ Սարգիս և դարձեալ Սարգիս անուն ուրիշ անձ մը ամբաստանիչ առեւտրի կողմէ իրրեւ ոճրագործ ամբաստանուած և թուղթերը յանձնուած են

Նղեռնագատ առեւտրի, որ ի մօտոյ պիտի գատէ գանձը :

— Անցեալ երկուշաբթի Արդարութեան պաշտօնատան մէջ գումարեալ յանձնաժողովոյ աշխատութեանց արդիւնքը պարունակող թէղքէրէն Ֆէնէրի Պատրիարքարանը զրկուելն յետոյ, էրէյի, Տէրքօնի և Սիսանիունի մեարապոլիտք քանիցս տեսակցեցան Արդարութեան և կրօնական գործոց նախարար Վսեմ. Բիզա փաշայի հետ որ նախագահած էր վերոյիշեալ յանձնաժողովին :

Մօնիդէօն, իւր մասնաւոր տեղեկութեանց յենլով, իբր յոյժ գոհացուցիչ կը նկատէ այդ տեսակցութեանց մէջ ձեռք բերուած արդիւնքը, որով բարեփոխուած է եպարքոսական թէղքէրէն կտակաց վերաբերող արամադրութիւնն և յանձնաժողովին ստորագրած մագալթան վերջնական կարգադրութեան մը իբր հիմ քունուած է : Ըստ որում կայս. կառավարութիւնն ի մօտոյ պաշտօնական հրահանգներ պիտի ուղղէ գաւառաց կուսակալներուն՝ գործարքել տալու համար եպարքոսական թէղքէրէն իւր բարեփոխեալ վիճակին մէջ, և այդ հրահանգներ պիտի վաւերացուին կայսերական Իրատէիւ գաւառաց կուսակալներուն արուելիք այդ հրամանաց վեհապետական վաւերացումը մի և նոյն ժամանակ և բացորոշ կերպիւ վաւերացում մը պիտի լինի անցեալ երկուշաբթի օրը վիճաբանուած և ընդունուած առանձնաշնորհմանց :

— Իրաւագիտական վարժարանին մէջ սըղադրութիւն եւս պիտի աւանդուի : Տըրուած որոշման մը համաձայն ժամանակին ներկայ չգտնուող ուսուցիչներու ամաթոշակին վրայ դեղջ մը պիտի լինի օրականի հաշուով և ադկից գոյացեալ գումարը պիտի յատկանայ վարժարանի գրատան համար հարկ եղած գրքերու և այլոց գնման :

— Պէրութէն կը գրեն թէ տեղոյն գերմանական հիւպատոսի կինն ու իւր երկու ընկերուհիք մաքրանոց գնացեր են հոն ըսպատող իրենց մէկ բարեկամուհին տեսնելու եւ իրարու ձեռք սեղմեր են : Մաքրանոցի բժիշկը ասոր վրայ ստիպուէր է հիւպատոսին կինն ու երկու ընկերուհիները քառանթիւսի ներքեւ առնուլ : Հիւպատոսը կուսակալին զիմեղով բողբեր է թէ իւր կինը ձեռնոցով գնացած էր և եթէ ձեռնոցը նետուէր, քառանթիւս սպասելու հարկ չէր մնար : Խնդիրը բժշկական յանձնաժողովի մը քննութեան ենթարկուելով, այս յանձնաժողով միաձայնութեամբ որոշեր է որ Գերմանիոյ հիւպատոսի կինն ու երկու ընկերուհիք իրրեւ վարակեալ տան օր քարանթիւս սպասեն :

— Մմասիոյ Քէօրիւ գաւառակի չրջակայ մէկ գիւղին մէջ տունէ մը հրդեհ ծագելով, ծեր կին մը և ութ ամսու մանկիկ մը բոցերու մէջ մնալով այրեր են :

— Սերաստիոյ ու չրջակայից մէջ այս օրերս սաստիկ ձմեռ կ'ընէ :

— Չմիւռնիոյ մէջ կին մը երկու գլուխ ունեցող գաւակի մը ծներ է : Երկու գլուխներն իրարու հաւասար են եղեր և մագերը խիտ :

— Հոռոմայ Պապը Պիոս Թ. պատուանշանի առաջին աստիճանը շնորհած է Լիբանանու կառավարիչ Վասա փաշայի :

— Ըստ տեղեկութեանց Հագիգաքի, Արդարութեան նախարարութեան հրամանաւ Սերաստիոյ վերաքննիչ առեւտրի ընդհանուր գատախազը Խարրերդ գնացեր է՝ քննելու համար ժողովրդեան կողմէ տեղոյն նախնա-

կան գատարանի ընդհանուր գատախազի օգնականին դէմ եղած բողբները :

— Խարրերդի կուսակալութիւնը ծանուցած է նահանգին ամէն կողմն թէ ոստիկանք, պաշտօնեայք և այլ այդ կարգի անձինք երբ գիւղերու մէջ գտնուելով՝ ջուրէ գատ ուրիշ որ և է բան մը գնեն, պէտք է գինը վըճարեն և հակառակը գործողներն օրինաց արամադրութեան ենթարկուին :

— Ջերբակալման հրաման ելած է ի Թօփգարու Խաշիկ Էֆէնային սպաննած լինելու ամբաստանութեան ներքեւ գտնուողներէն ջըրավաճառ Մեղքոնի համար :

Նոյնպէս ձերբակալման հրաման ելած է 25 տարեկան Պոլսեցի Աւետիս և 28 տարեկան Քրիս Բարաքլեան անուն երկու ազգայնոց համար :

— Այսօր տեղի կ'ունենայ Վարդ-Պատրիքօֆի և ընկերաց երրորդ գատախազութիւնը : Ճարտնական մարտանաւերն հասարակութիւնը ազատ պիտի լինի այցելել հինգշաբթի, ուրաթ և կիւրակէ օրերն :

— Կայս. կառավարութիւնը, հաղորդակցութեանց գիւրութիւն ընծայելու համար, ցամքեցնել տուած է Սամսոնի և Տրապիզոնի նահանգաց մէջ գտնուած ճահիճները : Պաֆրա ուղղակի յարաբերութեան մէջ կը գտնուի այժմ Սամսոնի հետ :

— Սելանիկի ծոցին մէջ գտնուող անգլիական զբահաւորներէն երկուքը, Գարապուրունի կողմը ուժրածուցութեան փորձեր կատարելով այս շաբթու, նոյն ծոցը վերադարձեր են :

— Կեսարիոյ Պիտայէթ ձկնա գատարանը և նոյն գատարանի ընդհ. գատախազի օգնականը՝ օրինազանցութեանց պատճառաւ դատաւ ենթարկուած են :

Պատ. առժամանակեայ Փոփանորդ կարգեցաւ Արժ. Խորէն Աւագ Գահ. Փէլիվանեան :

**ԿԱՐԵՒՈՐ Ա.ՉԻ**

Ո՞վ կ'ուզէ 7 1/2 դրուելով 15,000 Օսմ. ոսկի շահիլ, թո՛ղ փաթայ գնել Բուսիլի երկաթուղոյ սարգևաւոր վիճակահանութեան տոմսերէն, որ կը ծախուին ի Ղալաթիա, Պորսային գիւմայ. թիւ 23, Ժիւլիանի և Անտրիայի Պանքան : 2—4

**ԱՐՇԱԿ ՃԱՆԵԱՆ**

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

11, Պահնէ-Գաբու, 11

Պատրաստ կը գտնուին և յանձնարարութեամբ կը շինուին արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ կոշիկներ :

Խնամեալ ապրանք

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ 3—8

Ա Ր Ժ Է Գ Գ Ր Ա Մ Ո Ց	
Օսմ. լիբան 100 դր: էն	
Մէճիտիյէ	108 15   Արժ. Թէթ. (6 հատ) 82 20
Մէթալիք	99   Բուսիդ բօլ 90 10
Պէշիք, Ալթըլըք	102 40   Նարբէն 87 40
Քառորդ մէճիտ	106 20   Գրեմից 51 15
Մանր մէճիտ	101 40   Անգլ. լիբան 110 22
Մանէթ թղթագրած 7 74	
Գոնսուլիտէ (երեկոյ)	20 33   Բուս. երկ բաժին 78 75
Նոր փոխու. 4 01 0	Թասպիլէ (մոնր) 49 20
(Թահիլաթը Օսմ.)	80 37   Թասպիլէ (մեծ) 49

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա ՍԱԳԱՆԱՆ  
 ՏՊԱԳՐ ԵՇԱՆ Կ ՊԵՐՈՒԵՐԱՆ  
 Էսկի զապիթիէ հաստիսի, թիւ 61